ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ

Լիլիթ Կբաջյան

Վ. Մ. Մասոնի «Առաջին քաղաքակրթությունները» գրքից թարգմանաբար ներկայացնում ենք Միջին Ասիայի հնագույն մշակույթները գլուխը, նախատեսված պատմության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար:

Միջին Ասիայի բնական պայմանների համար բնորոշ է լանդշաֆտի երկու տեսակ՝ անապատ ու կիսաանապատ և լեռնային շրջաններ: Անապատներից առավել նշանակալից են Կարակումը և Կզլկումը, որոնք հարավային շրջաններում բնորոշվում են քիչ տեղումներով և մերձարևադարձային կլիմայով: Ամուդարյան և Սիրդարյան արագահոս են և տեխնիկապես թույլ զարգացումը դժվարացնում է դրանց ջրերի կիրառումը ոռոգման նպատակով: Որոշ դեպքերում համեմատաբար խոշոր գետերն ավարտվում են չոր դելտայով (Մուրհաբ, Թեջեն, Գերիրուդ) Կարակումի անապատում: Կարակումի հարավային սահմանի երկայնքով ձգվում է Կոպետ-Դաղը, որը Թուրքմենա-խորասանյան լեռների ճյուղավորումներից է: Կոպետ-Դաղը շատ բարձր չէ, նրա լանջերից դաշտավայր են հոսում ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր պարբերաբար չորացող ոչ մեծ վտակներ: Խոնավ ձորերը հարուստ են բուսականությամբ: Այստեղ աճում են ընկուզենի, վայրի սալոր և այլ մրգատու ծառեր:

Լեռնային զանգվածները (Տյան-Շան, Պամիր) ձգվում են լայնակի և ունեն բավականին բարձր գագաթներ: Լյոսային լեռնաստորոտի հովիտներից աչքի է ընկնում Ֆերգանայի հովիտը, որտեղ հողն ու կլիման բավարար ջրամատակարարման դեպքում ապահովում են բավականին բարենպաստ պայմաններ հողագործության համար, թեև դրա կենտրոնական մասը անապատ է: Պամիրի արևմտյան սահմանը արևմտատաջիկական կամ տաջիկա-աֆղանական գոգավորությունն է: Այստեղ գտնըվող բերրի հովիտները, որոնք առաջացել են Ամուդարյայի և Սիրդարյայի վտակներ Վախշի և Կաֆիրնիգանայի հովիտներում, շնորհիվ լեռնային զանգվածների պաշտպանված են հյուսիսից եկող սառը օդային հոսանքներից:

Միջին Ասիայի հնագույն երկրագործական մշակույթները կազմա-

վորվում էին շրջանի հարավ արևմուտքում՝ Կոպետ-Դաղի նախալեռնային դաշտավայրի հյուսիսում: Դա պայմանավորված էր երկու գործոնով՝ փոքր օազիսներում երկրագործության համար բարենպաստ պայմաններով և Առաջավոր Ասիայի ու Իրանի մշակույթների հետ վաղեմի կապերով: Վերջիններս, ինչպես հայտնի է եղել են հացահատկի մշակման աշխարհի հնագույն օջախները:

Հարավային Թուրքմենստանի վաղերկրագործական հուշարձանների ուսումնասիրությունը սկսվել է դեռևս XIX դ. Աշխաբադի մոտ գտնվող Անաուի հյուսիսային բլրի սիրողական պեղումներից (Джуракулов, 1964): 1904 թ Անաուում պեղել է ամերիկյան արշավախումբը և հրատարակել ստացված արդյունքների երկհատոր աշխատությունը, որը առաջացրեց մեծ հետաքրքրություն հուշարձանի հանդեպ (Pumpelly, 1908): Չնայած մեթոդական և մեթոդոլոգիական մշակման ցածր մակարդակի, այդ նյութը երկար ժամանակ մնում էր համաշխարհային գիտության համար Միջին Ասիայի վաղերկրագործական մշակույթների ուսումնասիրության հիմնական աղբյուր: 30-ական թվականներին Աշխաբադի հնագետների ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկան մի շարք նոր հուշարձաններ, սակայն հին բնակավայրերը չէին պեղվել, իսկ ստացված տվյալները չէին հրատարակվել: Վճռորոշ բեկում տեղի ունեցավ հարավ-թուրքմենստանյան հնագիտական արշավախմբի լայնածավալ ուսումնասիրությունների արդյունքում (Литвинский, 1952; Массон М. Е., 1955): Առավել կարևոր են Բ. Ա. Կուֆտինի ղեկավարությամբ 1952 թ. կատարված աշխատանքները, երբ պեղումների ընթացքում հաստատագրվեց էնեոլիթից բրոնզ գրեթե ամբողջ ժամանակաշրջանի շերտագրական (I-VI) հերթափոխությունը հնագույն մշակույթների կենտրոն՝ Նամազգա դեպեում (Куфтин, 1954; Массон, 1956): Հնագույն նստակյաց երկրագործական համալիրների սիստեմատիկ ուսումնասիրությունները կատարվել են 1955-1963 թթ. ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի հնագիտության ինստիտուտի Լենինգրադյան մասնաճյուղի և Հարավ թուրքմենստանյան հնագիտական արշավախմբի միացյալ ջանքերով: Ուսումնասիրության ընթացքում տեղի ունեցան խոշորամասշտաբ պեղումներ Ջեյթուն նեոլիթյան բնակավայրում, գեոկսուրյան օազիսի բնակավայրերում, Կարա դեպե էնեոլիթյան շրջանի խոշոր կենտրոնում, որը լայնորեն լուսաբանվեց և խորհրդային, և արտասահմանյան հրատարակություններում (Masson, 1961; Masson, Sarianidi, 1972): «Հնագիտական աղբյուրների ժո-

ղովածուի» չորս թողարկում նվիրվեց էնեոլիթյան համալիրներին (Массон, 1962; Хлопин, 1963, 1969; Сарианиди, 1965): Հատուկ ուսումնասիրվել են հարավ թուրքմենստանյան համալիրների կապերը Մերձավոր Արևելքի մշակույթների հետ (Массон, 1964 б):

Հետագայում, սկսած 1965 թվականից Ալթին դեպեի լայնածավալ պեղումների շնորհիվ նշանակալից ուշադրության արժանացան բրոնզեդարյան հուշարձանները (Массон, 1967): Այս աշխատանքները թույլ տվեցին հարց բարձրացնել մերձկոպետդաղյան դաշտավայրում հին արևելյան տիպի քաղաքակրթությունների զարգացման մասին (Массон, 1981 а): Ինչպես ցույց տվեցին պեղումները, Միջին Ասիայի հարավի հնագույն կենտրոնները ծագումնաբանորեն կապված են մ.թ.ա. II հազարամյակի մշակույթների հետ, որոնք գտնվում են Մուրհաբի հովտում (Массон, 1959; Сарианиди, 1976; Масимов, 1979) և Ամուդարյայի միջին հոսանքում, ինչպես Ուզբեկստանում (Аскаров, 1973, 1977), այնպես էլ Աֆղանստանում (Сарианиди, 1977): Արդյունքում պարզվեց, որ Միջին Ասիայի ամբողջ տարածքը յուրացվել էր հին արևելյան տիպի բարձր զարգացած մշակույթ ունեցող նստակյաց համայնքների կողմից:

Պարզվեց, որ վաղ երկրագործները չեն բավարարվել մերձկոպետդաղյան դաշտավայրի տարածքով, այլ զարգացման գագաթնակետին փորձել են յուրացնել Մուրհաբի հին դելտան և փորձել են հասնել Զերավշանի վերին հոսանքին, որտեղ Փենջիքենդից ոչ հեռու բացվել է հարավ թուրքմենստանյան ուշ նեոլիթին բնորոշ Սարազմ բնակավայրը (Исаков, 1986): Բազմազան նյութերը թույլ են տալիս հաստատել, որ Միջին Ասիան, առնվազն իր հարավային շրջաններում եղել է հին մշակույթների ինքնուրույն կենտրոն, որտեղ, ինչպես այլ շրջաններում, տեղի էր ունենում բնականոն զարգացում վաղ երկրագործներից դեպի առաջին քաղաքակրթությունները:

Այս առումով ցուցադրական է, որ հարավ թուրքմենստանյան մ.թ.ա. VI հազարամյակի Ջեյթունի նեոլիթյան մշակույթը իր հիմնական հատկանիշներով տիպիկ տեղական արտահայտումն էր այն վաղերկրագործական մշակույթների, որոնք Մերձավոր Արևելքի բոլոր շրջաններում հիմք էին հանդիսանում դեպի քաղաքակրթություն տանող հետագա զարգացման ճանապարհին:

Ջեյթունյան մշակույթը հիմք հանդիսացավ վաղերկրագործական մշակույթների էնեոլիթյան համալիրների հետագա զարգացման համար,

որը շնորհիվ էտալոնային հուշարձանի ստացել է անաունյան մշակույթ անվանումը: Ջեյթունյան և անաունյան մշակույթների սահմանին տեղի է ունենում տիպերի որակական փոփոխություն արհեստների տարբեր ոլորտներում, ինչը թույլ է տալիս խոսելու հնագիտական նոր մշակույթի սկզբնավորման մասին: Հենց այդ մշակույթների սահմանին են տեղի ունեցել վաղերկրագործական տիպի համալիրների տվյալ բնակլիմայական միջավայրին հարմարվելու վերափոխումները (Массон, 1986 б): Այս գործընթացը սկսվել էր դեռ ջեյթունյան մշակույթի ընթացքում և զարգացվել էր վաղերկրագործական ցեղերի կողմից նախալեռնային դաշտավայրերի յուրացման զուգընթաց: Արդյունքում ստեղծվել էին կայուն արտադրողական կենսապահովման ենթահամակարգեր, և, որքանով թույլ է տալիս դատել հնագիտական նյութը, սոցիոնորմատիվ համակարգ, որի հետ կապված էր թաղման ծեսը և մի շարք հավատալիքներ ու ծիսակարգեր:

Վաղ շրջանում անաունյան մշակութային ավանդույթների զարգացման մեջ գերակայում էր ինքնաբուխ վերափոխումը:

Այս վերափոխման արտահայտումը, որի բաղկացուցիչ մասերը ծագումնաբանորեն կապված էին էլամա-միջագետքյան միջավայրի հետ սկզբնական շրջանում աննշան էին:

Իր զարգացման ընթացքում Անաուի մշակույթը անցել է մի քանի փուլ կամ շրջան, որոնց տարբերությունը հատկապես վառ է արտահայտվում խեցեղեն նյութում: Որոշ փուլերի համար կարելի է առանձնացնել և խոշոր տարածքային և տեղային տարբերակներ: Անաուի մշակույթն ընդհանուր առմամբ ընդգրկում է մ.թ.ա. V-III հազարամյակները: Այս շարքում հնագույն համալիրներից է Անաու IA համալիրը, որը նկատվել էր դեռևս 1904 թ. Անաուի հյուսիսային բլրի ստորին շերտերի պեղումների ժամանակ (Ершов, 1956; Курбансохатов, 1983): Այս համալիրին բնորոշ են ուղղանկյուն հում աղյուսից կառուցված փոքր տները, կավից պատրաստված կոնաձև իլիկները, մետաղյա իրերը, որոնք կիրառվել են աստիճանաբար հետընթաց ապրող կայծքարային ինդուստրիային զուգընթաց: Նմանօրինակ շերտերով բնորոշվող հուշարձանները տարածված են նույն շրջաններում, ինչ ջեյթունյան մշակույթի բնակավայրերը: Մի դեպքում Անաու IA շերտերը ծածկում են ջեյթունյան շերտերը (Մունջուկլի-դեպե): Մեանա-Չաաչա շրջանում այդ բնակավայրերը պեղվել են բավականին մեծ տարածության վրա (Бердыев, 1968, 1972):

Անաու IA շերտերին խառնվող մշակութային շերտի հզորությունը կազմում է 3-4 մ.: Անաու IA ժամանակաշրջանի երկրագործական-անասնապահական տնտեսությունը զարգացնում է ջեյթունյան մշակույթի ժամանակ կազմավորված ավանդույթները: Մասնակիորեն ոռոգովի երկրագործությունը հիմնվում էր նախալեռնային վտակների և առուների վարարման ջրերի վրա: Մի դեպքում արձանագրվել են անգամ ջրհեղեղի հետքեր, երբ մշակութային շերտերը բաժանված են կավի կես մետրանոց շերտով (Лисицына, 1965): Երկու բնակավայր՝ Մունջուկլին և Չակմակլին Մեանա-Չաաչա շրջանում բաղկացած են մեկ սենյականոց փոքր տներից, որոնք գտնվում են նեղլիկ փողոցի երկու կողմում: Տների ներսում կան ելուստներ, որոնք գտնվում են դեմ դիմաց և կարծես կիսում են ուղղանկյուն տունը երկու սենյակի: Բնակավայրերից մեկում աչքի է ընկնում նույն հատակագծով ավելի խոշոր մի տուն, որի հատակն ու պատերը ներկված են կարմիր: Ամենայն հավանականությամբ դա համալիրի սրբատեղին է, որը կառուցված է ավանդական բնակելի տան հատակագծով: Խեցեղենին բնորոշ են կիսակլոր գավաթները, փոքր կոնաձև թասերն ու կճուճները: Անոթները գունազարդվում էին մուգ մոխրագույն, մուգ շագանակագույն կարմիր կամ բաց գույնի հիմքի վրա: Գերակայում են պարզունակ երկրաչափական հորինվածքները եռանկյունիների, ցանցկեն զարդանախշված պատկերների տեսքով: Կենդանիների արձանիկներն ու կոնաձև խաղանիշերը շարունակում են նեոլիթի շրջանում կազմավորված ավանդույթները: Կարևոր նորամուծություններից է մետաղի մշակումը, ընդ որում միանգամից ներկայացված են այնպիսի տեխնոլոգիական միջոցներ, ինչպիսիք են բաց կաղապարի մեջ ձուլումը, հալված պղնձի կոփումը և միջփուլային թրծումը (Терехова, 1975): Բավականին բազմազան են պղնձի իրերը: Գտնվել են մախաթներ, սրածայր քառանիստ գործիքներ, երկսայր դաշույններ, համեմատաբար խոշոր տեգի ծայր: Բացարձակապես պարզ է, որ այդ ժամանակ Միջին Ասիայի հարավում կազմավորվում է մետաղամշակման օջախ, որն աշխատում էր բերրովի, ամենայն հավանականությամբ իրանական հումքի վրա:

Անաու IA համալիրում նկատվում է ջեյթունյան նեոլիթի ավանդույթների համադրում մի շարք տեխնոլոգիական (մետաղամշակում, կոնաձև իլիկներ) և մշակութային (խեցեգործության մեջ նոր տիպեր, կայծքարային նոր տիպի ինդուստրիա, որը նկատելիորեն տարբերվում է ջեյթունյան արտադրությունից) նորամուծությունների հետ: Հիմք կա ենթադրե-

լու, որ տեղական միջավայրում նորամուծությունները կապված էին Կենտրոնական Իրանից թափանցած ցեղային խմբավորումների հետ, որոնք պարտադրել են տեղի բնակչությանը ընդունել իրենց ցեղային համակարգը: Դա արտահայտվում է ջեյթունյան մշակույթի ավանդույթների մասնակի պահպանմամբ (Массон, 1982 ж):

Նստակյաց երկրագործական մշակույթների զարգացման գործընթացը տեղի էր ունենում երկրագործական-անասնապահական համայնքների կողմից նոր տարածքների յուրացման զուգընթաց:

Նամազգա I-ի ժամանակաշրջանում տեղի էր ունենում Թեջենի դելտայի մասնակի բնակեցում և աստիճանաբար ընդգծվում են որոշ տեղային տարբերություններ, որոնք հատկապես նկատելի են կավամանների վրայի զարդանախշի մեջ: Նամազգա I համալիրի համար բնութագրական են կլոր գլխիկով պղնձյա քորոցները, կանգնած կանանց կավե արձանիկները, մանր կտրտված հարդախառն կավը և եռանկյունաձև միագույն նախշը: Մշակութային շերտերը հզոր են՝ 7-10 մ., բայց ժամանակագրական փոփոխությունները ցայտուն չեն, քանի որ մշակույթներում ավանդաբար կիրառվել են նույն ստանդարտներն ու էտալոնները:

Երկրագործության և անասնապահության մեջ, որոնք ապահովում էին սննդի հիմնական մասը նկատվում են որոշ տեղային տարբերություններ: Այսպես, Անաուում մեծ դեր էր խաղում խոզաբուծությունը: Մյուս հուշարձաններում, ամենայն հավանականությամբ գերակայում էր քոչվոր անասնապահության տիպի ոչխարաբուծությունը, որը բնորոշ էր կիսաանապատային շրջաններին: Նշանակալից դեր էր խաղում նաև խոշոր եղջերավոր անասունների բուծումը, որից, ենթադրում ենք, որ գոյություն ուներ կայուն սննդի արտադրանք, ներառյալ երկրագործությունից ստացված արտադրանքը: Անաուում լայն տարածում ուներ կուլանի որսը, որի ոսկորները սխալմամբ համարվել են ձիու ոսկորներ (Պոմպելիի արշավախումբ):

Փորիչ-փայտերի ծանր օղակները ցույց են տալիս, որ այս հնադարյան հողափորական գործիքը կարևոր նշանակություն ուներ հարավթուրքմենական տնտեսության մեջ:

Ջեյթունյան նեոլիթին բնորոշ փոքր բնակավայրերի կողքին հայտնվում են ավելի խոշոր բնակատեղիներ, որոնք դառնում են բնակչության կենտրոնացման վայրեր: Այսպես, Արթիկի (երկաթուղային կայարան Թուրքմենստանում) մոտ գտնվող Կարա-դեպեում Նամազգա I ժամանա-

կաշրջանի բնակեցված տարածքը, ինչպես նաև Նամազգա-դեպեի տարածքը 10 հա. էր: Անաուի նոր պեղումները ցույց տվեցին, որ փոքր չափերի ուղղանկյուն տների կողքին կային նաև հատակագծում կլոր կառույցներ, որոնք դատելով դրանց փոքր չափերից օգտագործվում էին որպես օժանդակ տնտեսական շինություններ (Курбансохатов, 1983): Փոքր բնակավայրերի մասին ընդհանուր պատկերացում է տալիս Թեջենի հին դելտայում լիովին պեղված Դաշլիջի դեպեն (Хлопин, 1961): Սակայն մանր և հաճախ շեղանկյուն կառույցների լաբիրինթոսում նկատելի է, որ դրանք խմբավորվում են մի քանի տնտեսական համալիրների: Նման համալիրի կենտրոնում գտնվում էր մեկ սենյականոց, 6-12 քառ. մ. մակերեսով տուն: Տան մոտ կար տնտեսական օժանդակ շինություններով ու խցերով փոքր բակ: Տներից մեկը աչքի է ընկնում իր չափերով (28,5 քառ. մ.) և հատակի գույնով, որը եղել է կարմիր, իսկ հետո՝ սև: Հավանաբար այդ կառույցը պատկանել է համայնքի առաջնորդին ու կատարել է նաև ընդհանուր հավաքների՝ սրբավայրի գործառույթ: Որոշ դեպքերում նման ոչ սովորական նշանակության տները ավելի ճոխ էին հարդարվում: Այսպես Անաուում գտնվել է երկգույն որմնանկար՝ երկրաչափական մոտիվներով, որոնք բնութագրական են նաև գունազարդ խեցեղենի համար: Մեկ այլ հուշարձանում՝ Յասի-դեպեում Կաախկայի մոտ բացվել է երկու միջանցիկ սենյակներով սրբավայր: Դրանցից մեկում գտնվել է խոշոր օջախ, իսկ մյուսի պատերի երկայնքով փայտյա սյունաշար է եղել: Պատերը զարդարված էին վառ երկգույն որմնանկարներով գիպսե սպիտակ դրվագազարդով: Այսպիսի հանդիսավոր շինությունները խորհրդանշում էին Հարավային Թուրքմենստանի վաղ երկրագործական մշակույթների բարեկեցությունը:

Կիրառական արվեստի տարածման մասին վկայում է նաև գունազարդ խեցեղենը, որի մոտավորապես 30% զարդարված է սև պատկերներով կարմիր կամ բաց գույնի մակերեսի վրա: Որպես կանոն դրանք երկրաչափական պատկերներ են, բայց հանդիպում են նաև ծառի, այծի և անհասկանալի եղջերավոր ու սմբակավոր կենդանիների սխեմատիկ պատկերներ: Երեխաների ու մեծահասակների թաղումներում հաճախ հանդիպում են տարբեր տիպի զարդեր, մասնավորապես ուլունքներ ու կախիկներ, ուլունքներից հավաքված մեծ վզնոցներ: Այդ ուլունքները պատրաստված են տարբեր քարերից, այդ թվում փիրուզից և սարդիոնից: Երբեմն ուլունքները կարվում էին հագուստին:

Լայն տարածում ունեին հում կավից պատրաստված կենդանիների սխեմատիկ արձանիկները: Որոշ արձանիկներ, սակայն պարզորոշ պատկերում են այծեր և ցլեր: Կավե մարդակերպ արձանիկները պատկերում են նստած կանանց: Դրանք զարդարված են շագանակագույն ներկով արված նախշերով: Նման փարթամ կանանց արձանիկներ գտնվել են Կարա դեպեում և Նամազգա դեպեում: Արևելյան շրջաններում, ինչպես վկայում են Դաշլիջիում գտնված արձանիկները, դրանց վերին մասը ավելի սխեմատիկ է, իսկ փարթամ ազդրերը ամբողջովին ծածկված էին կլոր փոսիկներով:

Նամազգա I համալիրը հարավթուրքմենստանյան հուշարձանների ցանկում գրավում է հաստատուն տեղ: Նյութական մշակույթում նկատվում է կապ Անաու IA-ի հետ: Գունազարդ խեցեղենն ունի խոր ծագումնաբանական կապ Ջեյթունի նեոլիթյան անոթների հետ: Գունազարդման որոշ տարրեր, մասնավորապես գծային եռանկյունիների եզրաշերտերն ունեն զուգահեռներ Միջագետքի հասունյան խեցեղենի և հյուսիս-արևելյան Իրանի Հաջի-Ֆիրուզ համալիրների խեցեղենի հետ: Բայց ընդհանուր առմամբ Նամազգա I տեղական, միջինասիական հնագիտական համալիր է, որը կազմավորվել է ջեյթունյան մշակութային համալիրների և Անաու IA-ի հիմքի վրա:

Իրարից հեռու գտնվող հուշարձանների միջև տարբերությունն աստիճանաբար խորանում է և մի ընդհանուր անաունյան մշակույթի սահմաններում նկատելի է դառնում դրա տեղական տարբերակը: Այս գործընթացը ավելի ցայտուն է դառնում Նամազգա II ժամանակաշրջանում:

Այդ ժամանակ արևմտյան խմբի հուշարձաններին բնորոշ էր երկգույն՝ կարմիր և սև գույնի գունազարդ խեցեղենը ընդհատվող երկրաչափական նախշով (Անաու, Կարա դեպե, Նամազգա դեպե): Արևելքում հակառակը՝ գունազարդումը դառնում է ավելի քիչ ու պարզեցված գերակայող զուգահեռ գծերով, որոնք հարդարում են անոթի վզիկը (Ալթին դեպե, գեոկսյուրյան օազիսի բնակավայրեր): Հավանաբար այս տարբերությամբ է արտահայտվում էթնոմշակութային գծերի տեղայնացումը ու երկու ցեղային խմբերի կազմավորումը:

Ներկայիս գիտելիքների մակարդակը դեռ թույլ չի տալիս խոսել վաղերկրագործական համայնքների արևմտյան և արևելյան տնտեսությունների նկատելի տարբերության մասին: Հիմնական մշակվող կուլտուրան փափուկ ցորենն ու երկշարք գարին էր: Վերջինիս, ինչպես հին Միջա-

գետքում տալիս էին գերապատվություն: Այսպես, Մուլալի դեպեի պեղումների ժամանակ գտնվել է 2011 հատիկ գարի ու միայն 250 հատիկ ցորեն: Ալթին դեպեի այդ ժամանակվա շերտերում գտնվել է գաճաճ փափուկ ցորեն և գարու երկու տեսակ՝ երկշարք և մերկահատիկ:

Ողողվող կամ մասնակիորեն ոռոգովի երկրագործությունը դառնում է լրիվ ոռոգովի, որը ապահովում է կայուն բերք: Այս փաստը վավերացվել է գեոկսյուրյան օազիսի ջրամբարների պեղումներով (Лисицына, 1965): Հնաէթնոբուսաբան Զ. Վ. Յանուշևիչը, ուսումնասիրելով Նամազգա II շրջանի ցորենի հատիկները Ալթին դեպեում, եկել է այն եզրակացության, որ այստեղ կիրառվել է ոռոգովի երկրագործություն (Янушевич, 1977): Երկրագործությունը լայն տարածում է գտնում մերձկոպետդաղյան օազիսներում: Գրեթե ամենուր հողային կտրվածքներում գտնվել են հզոր մնացորդային ագրոոռոգման հորիզոններ: Այն հուսալի տնտեսական հիմք էր մշակութային զարգացման համար:

Ընդլայնվում է նաև մարդու գործունեության մեջ ընդգրկված ընտանի կենդանիների շրջանակը: Համենայն դեպս մի շարք հուշարձանների, այդ թվում նաև Անաուի գտածոներից դատելով կարելի է խոսել երկսապատանի ուղտի ընտելացման մասին, որի ընտելացման օջախը, հավանաբար, Հարավ Թուրքմենստանյան և Արևելյան Իրանին հարող շրջաններն են (Ермолова, 1976, 1983):

Հուշարձանների արևմտյան խմբից լավագույնս ուսումնասիրվել են Նամազգա II շրջանի շինությունները, որոնք պեղվել են Կարա դեպեում (Массон, 1960 а, 1962): Այստեղ գտնվում են հստակ հատակագծով բազմասենյականոց կացարաններ: Դրանց բաղկացուցիչ մասն էին կազմում խոշոր բնակելի սենյակները, տնտեսական օժանդակ կառույցները (հաճախ երեսպատված խեցատներով) և ներքին բակերը: Ավելի հին ավերակներում առկա են հասուն մարդկանց և դեռահասների իջեցուկ թաղումներ, որոնք սովորաբար կատարվել են ձվածիր, երբեմն աղյուսաշար փոսերում:

Շնորհիվ գեոկսյուրյան օազիսի փոքր բնակավայրերի պեղումների (Хлопин, 1964, 1969) արևելյան խմբի հուշարձանների մասին տվյալները ավելի բազմազան են: Այսպես, Յալանգաչ դեպեում բնակավայրը պաշտպանված էր պարսպով, որից ներս կլոր հատակագծով կացարաններ կային: Դատելով մշակութային շերտից և օջախների առկայությունից, այս կացարանները բնակելի էին: Կային նաև ուղղանկյուն կացա-

ռաններ: Բնակավայրի կենտրոնական մասում, հարթակի վրա գտնվում էր հատակագծում ուղղանկյուն երկտեղ օջախ: Ամենայն հավանականությամբ դա տուն-սրբատեղի էր, որտեղ տեղի էին ունենում ընդհանուր հավաքներ: Նմանատիպ հատակագիծ ունի նաև Մոլալ դեպե բնակավայրը, որի կլոր հատակագծով կացարաններն ու կենտրոնական սրբատեղին պաշտպանված են պարսպով: Գրեթե այս բոլոր տարրերը նկատվում են գեոկսյուրյան օազիսի այլ հուշարձաններում և դրա կենտրոն Գեոկսյուր I-ում:

Փաստվել է պաշտպանական պարսպի առկայությունը Ալթին դեպեում, որն այն ժամանակ խոշոր բնակելի կենտրոն էր: Ինչպես արդեն նշվեց, Նամազգա II ժամանակաշրջանի խեցեղենը տարբեր է արևմտյան և արևելյան հուշարձաններում: Այսպես արևմուտքում տարածված էր բազմագույն խեցեղենը: Անոթի վերին մասը զարդանախշվում էր մանր գծացանցով պատված եռանկյունիներով, որն անցնում էր անոթի վերին մասով պաննոյի տեսքով: Այդ զարդանախշը, ինչպես նաև երկգույն՝ սև ու կարմիր համադրումը տալիս է անոթներին խայտաբղետ և շքեղ տեսք: Այդ շքեղ խեցեղենի կողքին կային կոպիտ խոհանոցային, փայլեցված, սև ու կարմիր ու նաև միագույն նախշով անոթներ: Հաճախ զարդանախշված եզրաշերտերի հորինվածքի մեջ մտնում էին սխեմատիկ գծային նախշով արված այծերի պատկերներ: Նամազգա II ժամանակաշրջանի ուշ փուլում երկգույն անոթները նվազում են, տեղը զիջելով անոթների, որոնց վրա պատկերներն արվել են մուգ շագանակագույն կամ սև գույնով: Արևելյան շրջանների խեցեղենն այնքան տարբեր էր, որ երբ պեղումների ժամանակ գտնում էին երկգույն խեցեղեն, համարում էին, որ այն ներմուծված է: Տեղական անոթները, որոնք ստացել են լավագույնս ուսումնասիրված հուշարձանի անունը՝ յալանգաչյան, բնութագրվում են կարմիր հիմքի վրա մուգ շագանակագույն զարդապատկերներով, մի քանի զուգահեռ գծերով, որոնք շուրթի երկայնքով գնում ու միանում են իրար ուղղահայաց գծիկներով կամ փոքր եռանկյունիներով: Մեծ անոթների վրա գերակշռում են խոշոր եռանկյունիներով՝ շևրոններով զարդապատկերները:

Նկատելիորեն աճել էր պղնձյա իրերի թիվը: Բավականին շատ պղնձյա իրեր գտնվել են գեոկսյուրյան օազիսում: Բացի մախաթներից և ծակիչներից գտնվել է կացին և տեգի ծայրեր: Հատուկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ արտադրության մեջ տեղի էր ունեցել տեխնոլո-

գիական առաջընթաց: Նկատվում է աշխատանքային գործիքների մակագամում (առանձին մասերը կպցնում էին գործիքին) և փակ կաղապարում մետաղի առաջին ձուլման փորձեր (Терехова, 1975): Շատ կարևոր էր վերջնական թրծման մեթոդը սառը կռումից հետո: Դրա արդյունքում իրը դառնում էր ավելի ամուր (Черных, 1962): Ոսկուց և արծաթից զարդերը ցույց են տալիս, որ մշակում էին նաև այս մետաղները: Շատանում է նաև գերեզմաններում դրվող զարդերի քանակը: Դրանք գլխավորապես ուլունքներ են, մասնավորապես ալեբաստրից, սարդիոնից, լազուրիտից ու նաև թանկարժեք մետաղներից: Դրանք գտնվել են կմախքի վզի, կրծքավանդակի, ողնաշարի, դաստակների ու ոտքերի մոտ: Այլ կերպ ասած դրանք շարված վզնոցներ էին ու ձեռքի ու ոտքի ապարանջաններ:

Շատ արտահայտիչ է Նամազգա II շրջանի կնոջ արձանիկը, որը գտնվել է արևելյան հուշարձանների խմբում: Սովորաբար այդ տիպի արձանիկները բավականին խոշոր և ծանր են: Կանայք պատկերված են նստած՝ ծանր, փարթամ կրծքերով, խոշոր ձեռքերով և ոտքերով: Արձանիկները ներկված են կարմիր ներկով, որի վրա սև ներկով նկարված են զարդեր և խորհրդանիշեր: Սովորաբար դրանք երբեմն բազմաշար վզնոցների պատկերներ են: Այդպիսի վզնոցներ հայտնի են դամբարանների պեղումներից: Արձանիկների ազդրերին կան կենդանիների, մասնավորապես այծերի պատկերներ: Յալանգաչ դեպեում գտնված արձանիկներից մեկի վրա պատկերված է 15 շրջան, կենտրոնում մի կետ: Առավել հավանական մեկնաբանությամբ դրանք խորհրդանշում են արևի սկավառակը: Այս հարդարանքը որոշ գիտնականներ փորձել են կապել օրացուցային փուլերի հետ (Хлопин, 1964): Անաուի մշակույթի Յալանգաչ դեպեի փուլի բնութագրման համար հետաքրքիր նյութ են տալիս 1986 թ. կատարված պեղումները Իլգինլի դեպե բնակավայրում, որը գտնվում էր Ալթին դեպեից 10 կմ. արևելք և ամայացած էր այն ժամանակ, երբ Ալթին դեպեն զարգանում էր որպես ուշ էնեոլիթյան խոշորագույն կենտրոն: Իլգինլի դեպեում հաստատագրվել է քարե քանդակների արտադրության կենտրոն: Քանդակների հարևանությամբ գտնվել է քանդակների համար նախատեսված նյութ ու քարե գործիքների մի ամբողջ հավաքածո, որն օգտագործվում էր քանդակների պատրաստման համար: Հաստատված է քանդակների առնվազն երկու տիպ՝ փոքր կրծքերով տափակ կուռքեր և ավելի խոշոր ռեալիստորեն պատկերված կլոր ուսերով ու խո-

շոր ընդգծված գլխով ու դիմագծերով արձանիկներ: Կուռքերից մեկը գտնվել է բնակելի սենյակի հատակին, դեմքով դեպի դուռը: Խոշոր քանդակները հավանաբար նախատեսված էին համայնական սրբատեղիների համար: Իլգինլիում գտնված կավե արձանիկները համեմատած Յալանգաչի արխայիկ արձանիկների հետ աչք են ընկնում նրբագեղությամբ:

Այսպիսով, Նամազգա II-ի ժամանակաշրջանում (հավանաբար մ.թ.ա. IV հազարամյակի սկզբին ու կեսին) նստակյաց համայնքները, որոնք բնակեցնում էին նախալեռնային շրջաններն ու Թեջենի դելտան, ստեղծել էին ոռոգովի երկրագործության համակարգ, որն օժանդակում էր մասնագիտացված արտադրությանն ու առաջին հերթին մետաղագործության զարգացմանը: Թեև պղնձյա գործիքները շատ չեն, կայծքարային գործիքների գրեթե լիակատար բացակայությունը, բացի այնպիսի խիստ մասնագիտացված գործիքների, ինչպիսիք են կայծքարային շաղափները, կողմնակիորեն վկայում են մետաղյա իրերի գերակայության մասին: Խոշոր կենտրոններով բնակավայրերի համակարգի ստեղծումն էլ է վկայում հասարակության կազմակերպվածության բարդացման մասին: Հասարակությունն ակներևաբար կանգնել էր մշակութային ծաղկման շեմին, որը սկսվեց ուշ էնեոլիթում՝ մ.թ.ա. IV հազարամյակի վերջին քառորդում ու III հազարամյակի սկզբում: Այդ ժամանակ հարավային Թուրքմենստանում կազմավորվում են հզոր վաղերկրագործական համալիրներ, որոնց ազդեցությունը շուտով սկսում են զգալ այս փակ շրջանի սահմաններից դուրս:

Կոպետդաղյան օազիսներում ուշ էնեոլիթի շրջանում պահպանվում է երկու մշակութային գոտի՝ արևելքի և արևմուտքի: Արևմուտքում տարածվում է Կարա դեպեին տիպիկ խեցեղեն, որը բնութագրվում է փոքր երկրաչափական նախշով և տարբեր կենդանիների՝ այծերի, հովազների, թռչունների պատկերներով: Արևելքում զարգանում էր գունազարդ խեցեղենի այլ տիպ գեոկսյուրյան տիպի վառ բազմագույն գունազարդմամբ, խոշոր խաչերի և կիսախաչերի պատկերներով: Դրա հետ մեկտեղ բնութագրական հատկանիշներով՝ տների տիպերով, արձանիկներով, մետաղյա գործիքներով և թաղման ծեսով, երկու խմբերը պարզորոշ միավորվում են մեկ մշակութային ընդհանրության մեջ, որն Անաուի մշակույթի ավարտական փուլն էր: Դրա տարածքը Միջին Ասիայի սահմաններում զգալիորեն մեծացել էր և նեոլիթում մերձկոպետդաղյան համայնք-

ների շարժը՝ արևելյան ուղղությամբ հանգեցրել էր Մուրհաբի դելտայում փոքր բնակավայրերի առաջացման և, ինչպես ցույց են տալիս տաջիկ հնագետների պեղումները, նստակյաց երկրագործական մշակույթը թափանցել էր նաև Տաջիկստան (Սարազմ, Փենջիքենդի մոտ):

Տնտեսական փոփոխությունների մեջ հատկապես կարևր էր ոռոգովի երկրագործության հետագա զարգացումն ու կատարելագործումը, որը հանգեցրեց ամբողջական ոռոգման համակարգերի ստեղծմանը, որոնցից մեկը պեղվել է գեոկսյուրյան օազիսում: Այստեղ գեոկսյուրյան օազիսի գլխավոր բնակատեղիի՝ Գեոկսյուր I-ի մոտ գտնվել են 3 կմ. երկարությամբ և 2.5 մ. լայնությամբ արհեստական ջրանցքներ: Ջրանցքների երկու կողմերում վերին և ստորին հոսանքներում գտնվում էին դաշտերը ուր ջուրը հասնում էր փոքր առուների միջոցով (Лисицына, 1965): Ոռոգովի երկրագործությունը, որը թույլ էր տալիս ցանքսը ջրել մի քանի անգամ ապահովում էր կայուն բերք և կարևոր գործոն էր տնտեսական և մշակութային առաջընթացի համար: Սայլերի մանրակերտների կավե անիվների գտածոները փաստում են փոխադրամիջոցների զարգացումը, որը հավանաբար սկսվել էր դեռ նախորդ դարաշրջանում: Անասնապահության մեջ Ալթին դեպեի և Գեոկսյուրի նյութերում նկատվում է մանր եղջերավոր անասունների և հատկապես ոչխարների բուծման տեսակարար կշռի աճ:

Մետաղագործության մեջ նկատվում է տեխնիկական միջոցների նկատելի բազմազանություն, որոնք կիրառվում էին տարբեր իրերի պատրաստման համար, և հիմք կա խսելու մշտապես գործող արհեստանոցների գոյության մասին (Терехова, 1975):

Բրուտագործության մեջ անոթների թրծման համար կիրառվում էին միահարկ հնոցներ, որոնք ապահովում էին կայուն ջերմաստիճան և պահանջում էին որոշակի տեխնիկական գիտելիք և հմտություն: Մեծ վարպետության մասին են խոսում նաև մարմարատիպ կրաքարից պատրաստված տարբեր անոթներն ու արձանիկները:

Նախալեռնային օազիսներում այդ ժամանակ շարունակվում է բնակիչների կենտրոնացումը խոշոր բնակավայրերում, որոնք ձեռք են բերում քաղաքայնացման արտաքին հատկանիշներ: Այսպես, Մեանա-Չաաչա շրջանում լքվում է Իգլինլի դեպե համեմատաբար խոշոր բնակավայրը, որի բնակիչներն ամենայն հավանականությամբ տեղափոխվում էին հարևան Ալթին, որից քիչ հարավ միջին էնեոլիթի ժամանակաշրջա-

նում յուրացնում էին նշանակալից տարածքներ: Այդ հարավային մասը անմիջապես սահմանափակվում է պարսպով: 1.4-1.7 մ. հաստությամբ հում աղյուսից կառուցված պարիսպը ամրացված է աշտարակ-որմնահեցերով: Ավելի վաղ կառուցված պարիսպները ստեղծել են աստիճանաձև հիմք ուշ շրջանի պարսպի համար: Պատերից այն կողմ կառուցված էին 1.7 մ. լայնությամբ անցումներ և կային ավելի լայն դարպասներ և սալապատ փողոց, որն անձրևի ժամանակ ապահովում էր անիվավոր փոխադրամիջոցների անցումը:

Կարա դեպեի լայնամասշտաբ պեղումները բացահայտեցին, որ խոշոր կենտրոններն ունեն ներքին տարածության կազմակերպված պլանավորման միտում (Массон, 1962 а, 1982 ж): Բնակավայրի կենտրոնական մասում գտնվում էր չկառուցապատված մի յուրատեսակ հրապարակ, դեպի ուր տանում են 2 մ. լայնությամբ փողոցներ: Հրապարակին կից գտնվում է մի խոշոր համալիր, որը դիտվում է որպես սրբազան արարողությունների համար նախատեսված շինություն (Хлопин, 1971; Массон, 1982 ж): Նրա գլխավոր կառույցները երկու գրեթե քառանկյուն օջախ-սրբատեղներն են ուղղանկյուն օջախ-հարթակներով: Սրբատեղիների երկայնքով ձգվում են մի խումբ փոքր, տնտեսական նպատակների համար ծառայող կառույցներ, իսկ մյուս կողմից գտնվում է ընդարձակ տնտեսական բակը: Այս հատվածում գտնված մարմարյա արձանիկը և մարմարատիպ կրաքարից պատրաստված մի շարք նրբագեղ անոթների կտորտանքներ, ամենայն հավանականությամբ պատկանում են ծիսական իրերի թվին:

Կարա դեպեի այս համալիրը կարելի է դիտարկել որպես նախատաճարային կառույց, որը ոչ միայն ծիսական արարողությունների, այլև տնտեսական գործունեության կենտրոն էր, որտեղ մասնավորապես պահվում էր համայնքի պահուստային և սերմային ֆոնդը:

Եվ արևմտյան, և արևելյան հուշարձաններում բավականին հաստատուն են բնակելի կացարանների կառուցման ստանդարտները: Կարա դեպեում դրանք ընդարձակ բազմասենյականոց կացարաններ են, որոնցում հիմնական հատակագծային միավորը՝ երկու սենյականոց համալիր է՝ բաղկացած համեմատաբար խոշոր օջախով բնակելի սենյակից և դրան կից օժանդակ շինությունից: Յուրաքանչյուր տուն-համալիր բաղկացած է 4-6 նմանատիպ միավորից, սակայն բոլորն ունեին ընդհանուր տնտեսական բակ, հացահատկի շտեմարան և ընդհանուր խոհանոց:

Նմանօրինակ բազմասենյականոց տներ պեղվել են նաև արևելյան բնակավայրերում՝ Գեոկսյուրում և Զոնգ դեպեում: Այդ կառույցների մեջ կային նաև կլոր օջախ-զոհասեղան ունեցող ոչ մեծ սենյակներ, որոնք թույլ են տալիս դիտարկել դրանք, որպես տուն-սրբատեղիներ:

Սարազմի կացարանները, որոնք գտնվում են Զերավշան գետի վերին հոսանքում ունեն նմանատիպ գծեր (Исаков, 1986): Այստեղ բացվել է կլոր սկավառակաձև օջախով սրբատեղի, ընդ որում, դրա պատերին մնացել են բազմագույն որմնանկարներ, որոնք կրկնօրինակում են գեոկսյուրյան զարդանախշը:

Համեմատած Նամազգա II շրջանի հետ որոշակի փոփոխություններ են դիտվում նաև թաղման ծեսում: Ավանդական անհատական թաղումների հետ մեկտեղ հայտնվում են կոլեկտիվ թաղումներ (դամբարանում մինչև 20 ննջեցյալ): Արևելյան խմբի բնակավայրերում տարածված էին ձվածիր կեղծ թաղով հում աղյուսից կառուցված դամբարաններ (Գեոկսյուր I, Ալթին դեպե):

Դիտարկվող ժամանակաշրջանի խեցեղենը հանդիսանում է կիրառական արվեստի փայլուն նմուշ: Այսպես, Կարա դեպեում գունազարդվում էին տարբեր ձևի թասեր, գավաթներ, գավեր, քրեղանատիպ անոթներ, ցածր վզիկով կճուճներ: Գերակայում է ընդհատվող երկրաչափական նախշը, որում գերակշռող տարրերը, ներառյալ խաչերն ու կիսախաչերը անչափ փոքրացված են, իսկ երբեմն էլ չեն դիտվում, որպես հորինվածքի ինքնուրույն տարր: Կարա դեպեի ոճի բնութագրական գծերից է կենդանատիպ մոտիվների լայն կիրառումը: Կենդանակերպ պատկերներում գերակշռում են ոլորված կոտոշներով այծերի ռեալիստական պատկերները: Երկրորդ տեղում են բծավոր կենդանիների ավելի պայմանական կատարված պատկերները: Միայն պատկերների ծագումնաբանական շղթային հետևելով կարելի է այդ կենդանիներին համարել հովազներ: Բավականին հաճախակի են թռչունների պատկերները, որոնք սովորաբար ունենում են արևի սկավառակի տեսք: Ավելի քիչ են զինանշանին բնորոշ՝ թևերը լայն բացված արծվի պատկերները: Գունազարդ խեցեղենը կազմում է ամբողջ խեցեղենի մոտ 20 %: Ոչ գունազարդ անոթները հիմնականում կանաչա-սպիտակ են, թեև կան գորշ փայլեցված խեցեղեն, այդ թվում նաև բարձր ոտքի վրա սկիհներ:

Գեոկսյուրյան անոթների զարդանախշման մեջ ի տարբերություն Կարա դեպեի, լայն կիրառվում է կաթնագույն մակերեսին սև ու կարմիր

ներկով գունազարդումը: Երկրաչափական պատկերները՝ խաչերը, կիսախաչերը և այլ տարրերը խոշոր են և առանձնանում են ընդհանուր երկրաչափական նախշից: Կենդանակերպ պատկերները ավելի քիչ են և ներկայացնում են երկրաչափական ոճով կատարված կենդանիների պատկերներ: Այսպես, սմբակավոր եղջերավոր կենդանիների (ամենայն հավանականությամբ այծեր) մարմիններն ուղղանկյուն են, արված ընդհանուր նախշի երկրաչափական պատկերի նման: Այծերի փորի տակ գտնվում է ներսում կիսախաչի պատկերով եռանկյունի, որը նույնպես կատարված է երկրաչափական ոճով:

Պեղումների ժամանակ գտնված պղնձյա իրերը ինչպես և նախորդ ժամանակաշրջանում փոքրաթիվ են: Դրանք կտրվածքում քառանիստ մախաթներ են, բահատիպ դուրեր, բահատիպ գլխիկներով քորոցներ, երկսայր տարատեսակ դանակներ, կլոր, քիչ ներս ընկած, առանց բռնակի հայելիներ: Դրա հետ մեկտեղ Ալթին դեպեում ուսումնասիրված քարե աշխատանքային գործիքները վկայում են մետաղի լայնորեն տարածված մշակման մասին (Массон, 1983 a): Բազմաթիվ և բազմատեսակ աշխատանքային գործիքների մեջ կան հանքաքարի մանրացման համար հատուկ մուրճեր, ինչպես նաև հղկանյութեր, որոնք օգտագործվում էին պղնձյա աշխատանքային գործիքները սրելու, հարթեցնելու կամ հավասարացնելու համար:

Հանքաքարի մշակման համար կիրառվող քարե գործիքների բազմազանությունը ցույց է տալիս, որ հանքերից բերվում էր հենց հանքաքարը, այլ ոչ թե ձուլակտորները, ինչպես ենթադրում էին նախկինում (Коробкова, 1986):

Գեղարվեստական և միևնույն ժամանակ ծիսական իրերի արտադրության կարևոր ոլորտներից է խեցեգործությունը, որը ներկայացված է վառ օրինակներով և արևելյան և արևմտյան խմբում: Կանացի արձանիկները, որոնք զգալիորեն տարբերվում են Նամազգա II ծանրամարմին արձանիկներից, ներկայացված են նստած վիճակում, ունեն նրբագեղ ազդրեր և ոտքեր: Արձանիկների վրա գունազարդումը փոխարինվում է ծեփածո կամ փորագրված նախշերով: Հանդիպում են ծանր, ուղղանկյունաձև ուսերով, երբեմն ձեռքերը կրծքի տակ ծալած արձանիկներ: Գլուխներն ունեն կտցանման կիսադեմ: Երբեմն մեջքին ծեփածո ծանր հյուս կա, իսկ գլխի երկու կողմում գտնվում են «S» տառի տեսքով կախիկներ: Անչափ կարևորվում է տղամարդկանց արձանիկների հայտնվե-

լը: Արձանիկները սովորաբար պատրաստվել են կոնաձև հիմքի վրա նստած կամ կանգնած դիրքում, սխեմատիկորեն ընդգծված ծանր քառակուսի ուսերով, բարակ հյուսով և երկար, երկու մասի բաժանված մորուքով: Այդ արձանիկները տարբերվում են գլխարկների տիպով: Որոշ արձանիկների գլխարկները փոքր են, մյուսների գլխին՝ սաղավարտի նման գլխարկներ են: Այդպիսի «զինվորների գլուխներ» հատկապես բազմաթիվ են Գեոկսյուր I բնակավայրից: Դրանք պատրաստվում էին հատուկ կաղապարներում հետագա մանրակրկիտ մշակմամբ:

Հարավային Թուրքմենստանի ուշ էնեոլիթի մշակույթին բնորոշ տարրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք տեղական ավանդույթների պահպանման զուգընթաց ակնառու են մի շարք նորամուծություններ, նախ և առաջ գունազարդ և միագույն խեցեղենում: Երկու դեպքում էլ նկատվում է իրանա-միջագետքյան մշակույթների ազդեցությունը: Այսպես Կարա դեպեի կենդանակերպ նախշերը նման են Սիալկ III և Հիսար IC- IIA խեցեղենի նախշերին, իսկ շատ բնորոշ գծեր և արևելյան, և արևմտյան հուշարձաններում ունեն զուգահեռներ հարավային Միջագետքի և մասնակիորեն Էլամի մանր քանդակի հետ:

Կարա դեպեում նոր մարդաբանական տիպի հայտնվելը (Трофимов, Гинзбург, 1960), թույլ է տալիս ենթադրել, որ տեղի է ունեցել նոր բնակչության մասնակի ներթափանցում գոնե արևմտյան բնակավայրերում: Մյուս կողմից Կարա դեպեի և Գեոկսյուրի գունազարդ խեցեղենի հորինվածքի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ջուլհակագործության և այլ արհեստներում կիրառվում էին այդ նույն զարդանախշերը, որոնք զարգանում էին տեղական միջավայրում (Массон, 1982 ж): Այսպիսով, Միջին Ասիայի հարավի վաղերկրագործական մշակույթների ծաղկումը հիմնված էր տեղական ինքնազարգացման վրա, սակայն աշխույժ արտաքին կապերի և երկստեք փոխազդեցության պայմաններում ակնառու է ինքնաբուխ և խթանիչ փոփոխության համադրումը: Վաղերկրագործական մշակույթի կազմավորված հզոր օջախը իր հերթին ազդեց հարևան շրջանների վրա:

Ուշ էնեոլիթի դարաշրջանի բնութագրական հատկանիշներից է Միջին Ասիայի հարավարևմտյան շրջանի ազդեցության ուժեղացումը Միջին Արևելքի և Հնդկաստանի նստակյաց համայնքների վրա: Այսպես, հարավթուրքմենստանյան տիպիկ տարրեր ինչպես գունազարդ խեցեղենում, այնպես էլ մանր քանդակում նկատվում են հյուսիսային Բելուջիս-

տանի համալիր Կվետայում (Массон, 1944 a): Նմանատիպ նյութեր կան նաև հարավաֆղանական Մոնդիգակում: Վերջին տարիներին նման հուշարձանների թիվը զգալիորեն աճել է: Այսպես, Շահրի-Սոխտե սեիստանյան բնակավայրի ամենաստորին հորիզոններում գունազարդ խեցեղենի 21-31% պատկանում է այն իրերի թվին, որոնք ակներևաբար պատկանում են Գեոկսյուրի և Կարա դեպեի խեցեղենի ոճին (Lamberg-Karlovsky, Tosi, 1973; Массон, 1981 a): Հենց Շահրի-Սոխտեում և Կվետայում են բացահայտվում հարավային Թուրքմենստանի հետ նշանակալից կապերը: Ավելի քիչ դրանք նկատելի են հարավային Աֆղանստանի հուշարձաններում, որտեղ դրանց առկայությունը բացի Մոնդիգակի տվյալներից ապացուցվում է Սաիդ կալա և Դեհ-Մոլասի-Գխունդայի ուսումնասիրություններով: Վերջապես միջինասիական խեցեղենի տիպեր գտնվել են Հինդոսի հովտում հարապյան քաղաքակրթությանը նախորդող վաղերկրագործական բնակավայրերի շերտերում: Այս ամենը ցույց է տալիս, որ հարավային Թուրքմենստանը եղել է մշակութային ազդեցության կենտրոն: Գեոկսյուրի և ավելի քիչ Կարա դեպեի ուշ էնեոլիթյան մշակույթը կարևոր դեր է կատարել այն նյութի կազմավորման գործում, որի հիման վրա կառուցվել է վաղքաղաքային մշակույթը ոչ միայն Միջին Ասիայում, այլև ավելի հարավային շրջաններում: Այդ ազդեցության մեխանիզմը էապես կապված է եղել նստակյաց համայնքի տարածման հետ, որի անդամները, աստիճանաբար թափանցել են տեղական միջավայր, թեև սկզբնական շրջանում, ինչպես ցույց են տալիս Շահրի Սոխտեի նյութերը, ապրել են առանձին խմբերով: Ուշ էնեոլիթում հարավթուրքմենստանյան համայնքների տեղաբնակեցման վկայություն է Զերավշանի վերին հոսանքում Սարազմ բնակավայրը: Շնորհիվ տարբեր ժամանակաշրջաններում բնակեցմանը այն գրավում է բավականին մեծ տարածք և ի տարբերություն բուն վաղերկրագործական օյկումենի, այստեղ չի կազմավորվել տիպիկ թել, որի շերտագրությունը թույլ կտար հետևելու մշակութային զարգացման բոլոր փուլերը: Առաջին բնակիչները, որոնք բնակություն էին հաստատել մի քանի հազարամյակ առաջ մշտական ջրային ոչ մեծ հոսանքների մոտ, զբաղվում էին մասնակիորեն ոռոգովի երկրագործությամբ:

Հավանաբար այս տարածքների յուրացումը նստակյաց հողագործների կողմից սկսվել էր դեռ Հարավային Թուրքմենստանում գեոկսյուրյան ոճի գունազարդ խեցեղենի ի հայտ գալուց առաջ: Համենայն դեպս

Սարազմում, որտեղ բացվել է քարե ցանկապատով առանձնացված դամբարանադաշտի մի հատված գեոկսյուրյան ոճի խեցեղենը բացակայում է: Սակայն հետագա զարգացումը գնում է անաունյան մշակույթի տեղական տարբերակի արևելյան ճյուղի էտալոնների կիրառման սահմաններում: Դա վերաբերում է նաև բազմագույն խեցեղենին և սկավառակաձև օջախ-զոհասեղաններով սրբատեղիներին, Կացարանները կառուցվում էին պախսայից[1], սակայն պաշտամունքային համալիրների պապատերը կառուցված էին ուղղանկյուն հում աղյուսներից: Սրբատեղիների պատերը զարդարվում էին բազմագույն նախշով, արված նույն ավանդույթներով, ինչ խեցեղենի նախշը: Հետաքրքիր են նաև այս տարածաշրջանի կապերը, որոնք հասնում էին հարավային Բելուջիստան, և դա նկատելի է նախ ծովային խխունջներից պատրաստված ապարանջաններից ու նաև սեիստանյան և հյուսիսբելուջիստանյան տիպի գունազարդ խեցեղենի գտածոներից: Ակնհայտ է, որ Զերավշանի հովտում այս հնագիտական համալիրի գոյությունը որպես կազմակերպված, կայուն մշակութային երևույթի ուղղակիորեն կապված էր մեկ կամ մի քանի համայնքների այս տարածք տեղաշարժման հետ, անկախ այն հանգամանքից, թե որքան հեռու է Սարազմը Միջին Ասիայի վաղերկրագործական մշակույթների բուն օջախից: Ընդ որում նոր բնակչությունը հայտնվել էր սկզբունքորեն տարբերվող էթնո-մշակութային միջավայրում, ինչի մասին վկայում են Սարազմի շերտերում գտածոները՝ փորագրված զարդանախշով, ծեփածո սուր նստուկով կավամանները: Դրանք ակներևաբար օգտագործվում էին նեոլիթի ձկնորսների և որսորդների կողմից և ավելի լավ հայտնի են կելտեմինարյան հուշարձաններից: Եկվորների և տեղաբնիկների միջև նման ահռելի տնտեսական և մշակութային տարբերությամբ դժվար թե հնարավոր լիներ մշակութային համատեղում կամ ձուլում, ինչպես դա տեղի էր ունեցել Սեիստանում և Բելուջիստանում, որտեղ եկվոր ցեղերը ընկնում էին մի միջավայր, որն իր հիմնական տարրերով մոտ էր իրենց մշակույթին:

Այժմ անդրադառնանք այն հարցերին թե ինչ էական փոփոխություններ են տեղի ունեցել Միջին Ասիայի հնագիտական համալիրներում մշակույթի և հասարակության մեջ: Նախ և առաջ նկատելի է տեխնոլոգիական առաջխաղացումն ու արտադրական ներուժի աճը: Առաջին որոշիչ

[1] Տեղում կաղապարի մեջ պատրաստված հում աղյուսի սալեր:

գործոնը, որն ազդել է արտադրողականության աճի վրա՝ կայուն, ոռոգովի երկրագործության կազմավորումն էր: Գեոկսյուրյան օազիսի հնեաէթնոբնագիտական ուսումնասիրությունը ոռոգման հին կառույցների հետքերը այս առումով որևէ կասկած չեն հարուցում: Դա արդյունավետ տնտեսական համակարգ էր, բայց դա արդյունավետ էր գործում միայն կազմակերպված համագործակցության պայմաններում՝ ընդհանուր նպատակային աշխատանքի դեպքում: Ոռոգման ցանցի ստեղծումն ու պահպանումը կարող էր լինել միայն խոշոր կոլեկտիվ աշխատանքի արդյունք: Հնէատնտեսական գնահատմամբ 50-75 հա. ընդգրկող Գեոկսյուր I ջրանցքների համակարգի կառուցումը այն ժամանակվա տեխնիկական զինվածությամբ (փորիչներ և հողը հեռացնելու զամբյուղներ) պահանջում էր մոտավորապես 2500 օրա/մարդ: Այլ կերպ ասած հարկավոր էր 150 մարդ, ովքեր զբաղված լինեին այդ աշխատանքով գրեթե 2 ամիս: Գեոկսյուրի աշխատանքային ռեսուրսները կարող էին թույլ տալ այդպիսի աշխատանքների իրագործում (Գեոկսյուրում բնակվում էր 2000 մարդ), բայց դա պետք է լիներ կոլեկտիվ աշխատանք, որը պետք է ունենար նպատակային կազմակերպվածություն:

Հարավթուրքմենստանյան համայնքների օրինակի վրա կարելի է տեսնել թե ինչպես համեմատաբար հուսալի և կայուն սննդամթերքի ստացման համակարգի հաստատումը բարենպաստ է ազդել բնակչության աճի վրա: Ջեյթունյան նեոլիթի ժամանակ մերձկոպետդաղյան դաշտավայրի բնակչության թիվը կազմել է մոտավորապես 3000 մարդ, որը բավականաչափ ցածր խտության ցուցանիշ է՝ մոտ 14 մարդ 100 քառ. կմ (Массон, 1971 в): Դա արտադրող տնտեսության արխայիկ փուլն էր լիմանային երկրագործությամբ և որսի որոշիչ դերով:

Մ.թ.ա. IV հազարամյակում ոռոգովի երկրագործության և կազմակերպված անասնապահության համակարգի զարգացմամբ (առավել արդյունավետ անապատա-տափաստանային գոտում) վիճակը հիմնովին փոխվում է և նույն տարածքի համար բնակչության թիվն արդեն 12000-14000 մարդ էր:

Կենցաղի փոփոխությունն ու բարեկեցության աճը խթանում էին նյութական մշակույթի զարգացման երկրորդ կարևոր ուղղությունը՝ մասնագիտացումը: Բրուտագործության մեջ հայտնվում են հատուկ հնոցներ, որոնց կիրառումը նշանակում էր ճյուղի ամբողջ տեխնիկական հիմքի վերակառուցում (Сайко, 1971): Կատարելագործվում է նաև քարի մշակու-

մը, ինչի մասին վկայում են տարբեր անոթներն ու արձանիկները՝ պատրաստված մարմարային կրաքարից: Անոթների պատրաստման համար կիրառվում էր դուրգը: Շաղափներն ունեին կայծքարից ծայր:

Հատկապես կարևոր նշանակություն ուներ մետաղամշակման զարգացումն ու կատարելագործումը: Արտադրության պայմանների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ուշ նեոլիթի ժամանակ գոյություն ունեին մշտապես գործող մասնագիտացված արհեստանոցներ (Терехова, 1975): Հավանաբար նման երևույթներ տեղի էին ունենում նաև ոսկերչական գործում, երբ ուլունքներն ու կախիկները պատրաստվում էին տարբեր նյութերից՝ ոսկուց, արծաթից, պղնձից, փիրուզից, սարդիոնից ու լազուրիտից:

Նման բազմաբնույթ արտադրական գործունեությունը անկասկած պահանջում էր նեղ մասնագիտացում: Կազմակերպվել էր համայնական արհեստ, երբ վարպետը սպասարկում էր համայնքի այլ անդամներին իր՝ այդ համայնքին պատկանելու պատճառով, այլ ոչ թե առք ու վաճառքի միջոցով: Իր հերթին համայնքն ապահովում էր վարպետին գյուղատնտեսական մթերքով: Արտադրության նման կազմակերպում լավ հայտնի է մի շարք աղբյուրներից և ըստ էության ապահվել է արտադրության և տեխնիկայի զարգացումը ավանդական կառույցների սահմաններում (Массон, 1976 б): Հայտնի է, որ Գեոկսյուր I բնակավայրում մասնագիտացված գործունեության հետ կապված բրուտագործական հնոցները գտնվել են բնակավայրի տարբեր հատվածներում ինչը փաստում է, որ վարպետները աշխատել են անջատ, սպասարկելով հասարակական միավորում ընդգրկված անհատներին: Արտադրության նման կազմակերպումը խթանում էր արդյունավետ գործունեությունը, ինչը երևում է արդյունքից՝ բարձրորակ արտադրանքով, իսկ հաճախ նաև բարձրարժեք իրերով: Այսպիսի բարդ տնտեսական գործունեությունը պահանջում էր փոխադրամջոցների զարգացում: Իզուր չէ, որ, համենայն դեպս, ուշ էնեոլիթից սկսած հայտնվում են անիվավոր սայլեր, որոնց կարելի է լծել խոշոր եղջրավոր անասուններ և ուղտեր: Մշակվում են նաև հասարակության կազմակերման և գործունեության մեխանզմներ հիերարխիկ տարբեր մակարդակների վրա: Ջեյթունյան մշակույթի բնակավայրերում առկա էին մեկ սենյականոց փոքր կացարաններ, որոնք հանդիսանում էին հասարակական ամենափոքր միավորի՝ փոքր ընտանիքների բնակման և կենսագործունեության վայրեր: Մասնակիորեն այս ավանդույթը պահ-

պանվել է նաև վաղ էնեոլիթի ժամանակ, ինչպես կարելի է տեսնել Անաուի և Դաշլիջի դեպեի օրինակի վրա: Այնուհետև հասարակության նախնական միավորը մեծանում է: Այսպես, Նամազգա II-ի ժամանակաշրջանում գեոկսյուրյան օազիսի բնակավայրերը բաղկացած էին 8-20 կողք կողքի կառուցված առանձին տներից: Առկա է խոշոր բազմասենյականոց կացարանների կայացման միտում: Ամբողջ բնակավայրի համար ընդհանուր շտեմարանի և տուն-սրբատեղիի, որպես ընդհանուր հավաքատեղիի գոյությունը ընդգծում է այստեղ բնակվող կոլեկտիվների տնտեսական և գաղափարական ընդհանրությունը: Առավել հավանական է, որ դա մեծ ընտանեկան համայնք էր՝ բաղկացած մի քանի փոքր ընտանիքներից, որոնք միավորված էին արյունակցական կապերով և ընդհանուր տնտեսական գործունեությամբ: Միայն այդպիսի՝ համեմատաբար խոշոր կոլեկտիվները կարող էին ապահովել ոռոգման համակարգի գործունեությունը, որի վրա էր հենվում ոռոգովի երկրագործությունը:

Ուշ էնեոլիթում այս երևույթը ամրագրվում է նոր ճարտարապետական ստանդարտներով: Կառույցների հիմնական տիպը, որը վկայված է Կարա դեպեում և Գեոկսյուրում բազմասենյականոց կացարանն է, որն ի սկզբանե կառուցվում էր որպես խոշոր շինություն: Նախնական նախագծված միավորը բնակելի սենյակն էր կից տնտեսական շինությամբ, որը հաշվարկված էր փոքր ընտանիքի համար: Սակայն ընդհանուր խոհանոցը, ընդհանուր տնտեսական բակը, ընդհանուր շտեմարանը, իսկ Գեոկսյուրում նաև ընդհանուր սրբատեղին վկայում են այս կացարանների բնակչության միասնականության մասին: Իրենց կազմավորման պահից նման կացարանները հաշվարկված էին մի քանի ընտանիքներից բաղկացած մեկ տանիքի տակ բնակվող և ընդհանուր տնտեսություն վարող կոլեկտիվի համար: Այդպիսի կոլեկտիվը որը դատելով պեղված կացարանների հատակագծից միավորում էր 4-8 ընտանիք, այժմ դառնում է բնակատեղիի հիմնական բջիջը: Դրա մասին են վկայում նաև թաղման ծեսում տեղի ունեցած փոփոխությունները: Հենց ուշ էնեոլիթում հարավային Թուրքմենստանում հայտնվում են կոլեկտիվ թաղումներ: Դրանք հատուկ դամբարաններ էին, որտեղ գտնվել են 3-8, իսկ երբեմն ավելի քան 20 թաղում: Սեռատարիքային ցուցանիշներով կարելի է համարել, որ դրանք մեծ կոլեկտիվի ընտանեկան թաղումներ են, առավել ևս, որ կա նաև նահապետի թաղում, իսկ ատամներց որոշվել է մեկ դամբարանում թաղված անհատների մոտիկ ազգակցությունը (Сарианиди, 1972):

Ավելի դժվար է դատել հասարակական կազմակերպվածության առավել նշանակալից միավորների մասին: Վաղերկրագործական հասարակության բարձրագույն կառուցվածքային միավորը դառնում է օազիսային բնակեցման համակարգը բնակավայրերի երկու հիերարխիկ մակարդակով: Եթե, դատելով չափերից, գեոկսյուրյան օազիսների փոքր բնակատեղիները լիովին կարող էին լինել մեծ ընտանիք ունեցող կոլեկտիվների բնակատեղի, ապա Գեոկսյուր I-ի կենտրոնական բնակատեղին իր առնվազն երկու հազարանոց բնակչությամբ ակներևաբար ներկայացնում էր ավելի բարդ մարմին, որը միավորում էր մի քանի տասնյակ մեծ ընտանիքներ կամ տնային համայնքներ: Հնարավոր է, որ գոյություն ուներ ինչ-որ միջանկյալ հասարակական կառույց, ինչպես, օրինակ՝ տոհմական համայնքը, թեպետ ամբողջ օազիսը, ընդհանուր առմամբ, բնակեցված էր մի ցեղով:

Գեոկսյուր I կոլեկտիվի դամբարանները, որոնց կարելի է դիտարկել որպես առանձին մեծ ընտանիքի համար նախատեսված դամբարան, երբեմն խմբավորում էին 4-7 դամբարաններ:

Որպեսզի հնարավոր լիներ կազմակերպել բնակչության նման, համեմատաբար մեծ զանգվածի կենցաղը, ինչպես նաև կենտրոնացնել նրանց ընդհանուր ոռոգովի երկրագործության աշխատանքի վրա, անհրաժեշտ էր կառավարման գործադիր մարմին, որն ամենայն հավանականությամբ հանդիսացել է ծերակույտը, ինչպես նաև տարբեր աստիճանի առաջնորդներ և քրմեր: Նման ինստիտուտի հնագիտական վկայությունները շատ չեն և կրում են անուղղակի բնույթ: Այսպես, հենց ուշ էնեոլիթում, երբ պարզորոշ երևում է հասարակական կենսագործունեության տարբեր ոլորտներում կառուցվածքի բարդացման գործընթացը, հայտնվում են կավից պատրաստված արձանիկներ, որոնք պատկերում են փոքր սև գլխարկներով կամ սաղավարտներով տղամարդկանց: Հավանաբար այս արձանիկները կապված էին առաջնորդի պաշտամունքի առաջացման հետ, որպես նախնիների երկրպագության արտացոլում և պատկերում են քրմերին և առաջնորդներին, որոնք հաջողությամբ կատարում էին տնտեսական, գաղափարախոսական և ռազմական առաջնորդի գործառույթները:

Սակայն դատելով ամենայնից ուշ էնեոլիթի սոցիալական տարբերակումը (կամ միայն նրա նյութական արտացոլումը) դեռ այնքան էլ նշանակալից չէր: Այսպես, ըստ թաղման գույքի Կարա դեպեում կարելի է նշել

գերեզմանների երեք խումբ. առանց խեցեղենի, 1-3 անոթով և 8 անոթով, որոնք որպես կանոն գունազարդ են: Հնարավոր է, որ դա մատնանշում է այն ժամանակվա հասարակությունում առնվազն երեք խավերի գոյությունը, որն արտացոլվում է թաղման ծեսում: Թաղումներից մեկը, որում գտնվել են մեծ թվով անոթներ, աչքի է ընկնում մի հազվադեպ իրով՝ կանացի արձանիկով: Նամազգա II-ի ժամանակաշրջանում, ինչպես ցույց են տալիս Կարա դեպեի նյութերը, աչքի են ընկնում ամբողջ մարմնի վրա ուլունքներով, վզնոցներով, կամ դաստակներին ապարանջաններով կանանց թաղումները: Այսպես, թաղումներից մեկում գտնվել է 800, իսկ մյուսում՝ 420 ուլունք, այդ թվում՝ ոսկուց և արծաթից: Ուշ էնեոլիթում, իր բնույթով այսպիսի անսովոր գույքի (մանավանդ կանանց թաղումներում) ավանդույթը ոչ միայն պահպանվում է, այլև շարունակում է զարգանալ: Ալթին դեպեի թաղումներից մեկում գտնվել է 5 գունազարդ անոթ, մարմարատիպ կրաքարից 2 անոթ, փիրուզից 10 ծակիչ և երկու պղնձյա իր: Մյուս դամբարանում գտնվել է 8 կավե անոթ և երկու խոշոր կանացի արձանիկ: Չի բացառվում, որ դրանք քրմուհիների թաղումներ են, որոնց հասարակական դիրքն ընդգծվում էր համապատասխան թաղման գույքով:

Տնտեսական և մշակութային աստիճանական զարգացումը ուղեկցվում էր մշակութային և մտավոր ներուժի աճով և նշանակալից մշակութային և գեղարվեստական արժեքների ստեղծմամբ: Վաղերկրագործական շրջանին բնորոշ նոր կենսակերպը հաստատվել էր հարավային Թուրքմենստանում դեռ մ.թ.ա. VI հազարամյակում: Ամուր, բարեկեցիկ ջեյթունյան կացարանները, որոնց հարմարավետությունն ընդգծվում էր կրաքարային հատակով ու սև ու կարմիր ներկած պատերի ներքին հարդարանքով, այդ փոփոխությունների վառ օրինակ են:

Անաունյան մշակույթի զարգացման զուգընթաց աստիճանաբար աճում էր նաև բարեկեցությունը ու կենցաղային ապահովվածության մակարդակը: Կավե անոթներն ավելի բազմազան էին ըստ տիպերի և նախշազարդման, ավելի լայն գործածություն էին ստանում տարբեր տիպի զարդերը, որոնց պատրաստման համար օգտագործվում էին ինչպես տարբեր մետաղներ, այնպես էլ կիսաթանկարժեք քարեր: Նյութական մշակույթի հարստությունը ներկայացված է հուշարձանների ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան խմբերում և դրա կազմը բավականին բազմազան է: Գունազարդ խեցեղենը պատկանում է այն իրերի թվին,

որոնք կրում էին բարդ սեմանտիկ գաղափար, և, որպես կիրառական արվեստի նմուշ այն ուղեկցում էր կոլեկտիվի անդամին օրորոցից մինչև մահ: Կրկնվող զարդանախշի խորհրդանիշերի համակարգը միջոցներից մեկն էր, որն ամրագրում էր վարքագծային չափանիշներն ու մտածելակերպը, նպաստում էր գեղագիտական ընկալմանը: Չպետք է մոռանալ նաև որ նախագրային շրջանում մեծ դեր էր խաղում տեղեկատվության հաղորդման գեղարվեստական ձևը:

Հենց այս դիրքերից է հարկավոր գնահատել գունազարդ խեցեղենի զարդանախշերի սեմանտիկայի հարցերը, որոնց ուսումնասիրությունը և մեկնաբանումը տրիպոլյան նյութի հիման վրա (Рыбаков, 1965) բավականին հեռանկարային է:

Խեցեղենի գունազարդումը ենթարկվում էր զարդանախշման որոշակի օրենքների և մասնավորապես, անոթի ողջ եզրաշերտով պատկերի կրկնման օրենքին: Կենցաղում այս գեղարվեստական միջոցի կիրառումը օգնում էր ստեղծել կայունության և կրկնվողության մթնոլորտ: Անաուոյան անոթներում բարդ սեմանտիկ գաղափար էր կրում խաչի պատկերը, որն ի սկզբանե կատարել էր չար ուժերի ազդեցությունը կասեցնող հմայիլի գործառույթ: Կարադեպեյան և գեոկսյուրյան գունազարդ խեցեղենին բնորոշ պարզ խաչերը, բարդ բազմաստիճան խաչանման պատկերները և դրանց տարրերը համադրում էին գեղագիտական և մոգական խորհրդանիշերը: Հատկապես հետաքրքիր են որոշ դեպքերում խաչը փոխարինող կենդանիների պատկերները: Քանի որ դրանք մեծամասամբ վայրի կենդանիներ են, դրանց տարածված լինելը նստակյաց հողագործների և անասնապահների մոտ հավանաբար կապվում էր տոտեմիստական պատկերացումների հետ (Массон, 1964 б): Դրա հետ մեկտեղ կան արևի սկավառակի հետ թռչունների պատկերներ, ինչպես նաև այնպիսիք, որոնց վրա պարզ երևում է ատամնավոր թագ: Անտարակույս սա շատ լավ հայտնի թռչուն-արև սեմանտիկայի մասնավոր դեպք է: Որոշ իրերում եզրաշերտի գոտու վրա պատկերված են տարբեր կենդանիներ, խաչեր կամ կիսախաչեր: Շատ հավանական է, որ բարդ տեսարանները արտացոլում են դիցաբանական պատկերացումները և հանդիսանում են դիցաբանական պատմությունների նկարազարդումներ, որոնք նստակյաց երկրագործների հոգեկերտվածքի մի մասն էին: Հիմք կա ենթադրելու, որ առնվազն ուշ էնեոլիթում կազմավորվել էր խորհրդանիշերի համակարգ, որի հիմքի վրա բրոնզի ժամանակաշրջա-

նում կերտվում էին կանացի աստվածությունների արձանիկները: Համենայն դեպս կանանց բրոնզեդարյան կավե արձանիկների վրա պատկերված նշաններից շատերը, ճիշտ է, ընդամենը եզակի օրինակներով, սերում են էնեոլիթյան համալիրներից: Հավանաբար արդեն սկսել էր զատվել կանացի աստվածությունների և ոգիների գործառույթը և սեմանտիկան, որի նշանակությունը միշտ չէ, որ բացատրելի է, քանի որ ուսումնասիրողները հետևում են այն կարծրատիպին, որ այն ժամանակ համատարած իշխում էր միայն պտղաբերության աստվածությունը:

Կազմավորվում էր հավատալիքների ու ծեսերի բարդ համակարգ, որը պահպանվում ու կանոնակարգվում էր քրմերի կողմից: Հենց քրմերի թաղումներում էլ գտնվել է համեմատաբար հարուստ և բազմազան նյութ: Այդ հավատալիքների կենտրոններ էին դառնում հատուկ կառույցսրբատեղիները, որոնց համար մշակվում էր հատուկ ճարտարապետական կանոն: Այդ կառույցները դեռևս ձեռք չէին բերել մոնումենտալ ճարտարապետության գծեր, սակայն, ինչպես ցույց են տալիս Կարա դեպեի պեղումները բնակավայրում դրանք գրավում էին կենտրոնական դիրք:

Բրուտագործության և մետաղամշակման, ինչպես նաև ռոգովի երկրագործության տեխնոլոգիական հաջողությունները վկայում են դրական գիտելիքների փորձնական ճանապարհով կուտակման մասին: Կասկած չի հարուցում, որ գոյություն է ունեցել գյուղատնտեսական օրացույց, անկախ այն բանից, թե որքանով է դա հաջողվել վերծանել կանացի արձանիկներից մեկի վրա պատկերված խորհրդանիշերի համակարգում (Хлопин, 1964): Չնայած նախնադարյան ողջ մշակույթին բնորոշ ավանդապաշտությանն ու կրկնվողությանը, ժամանակ առ ժամանակ տեղի էր ունենում գեղարվեստական պատկերացումների փոփոխություն: Կիրառական արվեստում հայտնվում են նոր ոճեր, որոնք ոչ միշտ է կարելի բացատրել բնակչության մեխանիկական տեղաշարժով: Ցուցադրական է, օրինակ, գեղագիտական կանոնների փոփոխությունը արձանիկներում:

Նամազգա I և II շրջանների արձանիկները ներկայացնում են ռեալիստորեն պատկերված փարթամ կանանց, որոնք լի են հանգիստ և ինքնավստահ հավասարակշռությամբ: Ավելի ուշ այդ փարթամ կանանց փոխարինում են գեղանի, սլացիկ, նրբագեղ արձանիկներ: Ակնառու է, որ տեղի է ունեցել կանանց գեղեցկության չափանիշների և դրանց արտահայտման ձևերի փոփոխություն:

Այսպիսով, էնեոլիթի ժամանակաշրջանը վաղերկրագործական մշակույթի բազմակողմանի զարգացման շրջան էր: Արդյունքում կուտակվել էր զգալի արտադրողական և մշակութային ներուժ, ինչը հնարավորություն տվեց հասարակությանը անցնել որակական նոր աստիճանի, որը նույնպես կարելի է հետևել հնագիտական առանձին համալիրների զարգացմամբ: Սկզբունքորեն նոր շրջանի սկիզբը համընկնում է Նամազգա IV տիպի հնագիտական համալիրների կամ վաղ բրոնզի (մ.թ.ա. 2900-2300 թթ.) ժամանակաշրջանի հետ: Դրա բնութագրական հատկանիշներից են միագույն երկրաչափական զարդանախշով գունազարդ խեցեղենը, որը սկզբում մասնակիորեն, իսկ հետո գրեթե լիովին պատրաստվում էր դուրգի վրա: Սկսվում է կիրառվել պղնձի և մկնդեղի համաձուլվածքը: Պատրաստվում էին ձևավոր գլխիկներով քորոցներ, մարմարյա կրաքարից փոքր կափարիչներով բարձր գլանաձև ճրագամաններ: Տարածքային առումով այս հուշարձանները կենտրոնացած են գլխավորապես մերձկոպետդաղյան դաշտավայրում, որովհետև բնական գործոնների արդյունքում տեղի է ունենում գեոկսյուրյան օազիսի ամայացում և Թեջենի հովտում կա միայն մեկ նստակյաց բնակավայր՝ Հափուզ դեպեն: Մշակույթում պահպանվում են տեղային տարբերությունները: Այսպես, ինչպես ցույց են տալիս Նամազգա դեպեի և Ակ դեպեի (Աշխաբադի մոտ) նյութերը, կարադեպյան ավանդական անոթների ձևերի հիման վրա կազմավորված խեցեղենի հետ մեկտեղ, համեմատաբար շատ է նաև գորշ-մոխրագույն խեցեղենը: Հուշարձանների արևելյան խմբում, որտեղ գեոկսյուրյան տիպի խեցեղենը ավելի վաղ էր տարածվել (Ալթին դեպե, Հափուզ դեպե), հստակ երևում է տեղական ավանդույթների շարունակությունը՝ գունազարդ խեցեղենը փոփոխվում է (զարդանախշի աստիճանաբար փոքրացմամբ) ավելի վաղ շրջանի հիմնական ավանդույթների համապատասխան: Գորշ անոթները եզակի են և ամենայն հավանականությամբ ներմուծված իրեր են: Հատուկ մշակութային շրջան են ներկայացնում արևմտյան Կոպետ-դաղի հուշարձանները: Սումբարի հովտում պեղվել է Պարհայ II դամբարանադաշտը (Хлопин, Хлопина, 1980): Այստեղ բացված կոլեկտիվ թաղումներով դամբարաններում բավականին շատ է գորշ և սև փայլեցված խեցեղենը, որը շատ մոտ է հյուսիս-արևելյան Իրանի խեցեղենին հայտնի Շահ թեփեի և Թեփե Հիսարի պեղումներից: Երկրագործության և անասնապահության մեջ պահպանվում էր ավել վաղ կազմավորված համակարգը:

Կենդանիների քաշող ուժի օգտագործման մասին կողմնակիորեն վկայում են առաջնամասում ուղտի պատկերով քառանիվ սայլերի մոդելները: Առավել խոշոր փոփոխություններ տեղի են ունենում տեխնոլոգիայում: Հայտնվում է դուրգը և ժամանակաշրջանի ավարտին ողջ խեցեղենը պատրաստվում էր դուրգի վրա:

Մետաղամշակման մեջ նկատվում է մկնդեղային և կապարային բրոնզի օգտագործում:

Կառույցների տիպերը լավ ուսումնասիրվել են Ալթին դեպեում (Кирчо, 1986): Վաղ բրոնզի սկզբնական փուլերում դրանք կիպ կողք կողքի կառուցված երկու կամ երեք սենյականոց կացարաններ են, որոնք բացվում էին դեպի չկառուցապատված լայն ներքին բակ: Բնակավայրը պաշտպանված էր 2,2-3 մ. հաստությամբ պարիսպով: Պատի և կառույցների միջև գտնվում են կոլեկտիվ թաղումներով դամբարաններ, որոնք ի տարբերություն ուշ էնեոլիթի ունեն ոչ թե կլոր այլ ուղղանկյուն հատակագիծ: Ավելի ուշ շերտերում բացվել են մի պատի երկայնքով կառուցված և երկար միջանցքներով միացող սենեկաշարքային կացարաններ: Բացված հատվածներից յուրաքանչյուրում կար սրբատեղիի դեր կատարող կառույց: Դրանցում գտնվում էր օջախ-հարթակ, հաճախ հանդիպում են խաչի տեսքով խորշեր և ծիսական արկղեր և խաչի կամ կիսախաչի տեսքով փորագիր զարդանախշեր ունեցող ծիսական արկղեր:

Հայտնվում են նաև մոնումենտալ կառույցներ: Այսպես, բնակավայրի գլխավոր մուտքը, որի պաշտպանական պատերի հաստությունը հասնում էր 6 մ. ուներ նաև հզոր սյուն-աշտարակներ, զարդարված քառանկյուն հարթ որմնասյուներով: Մուտքի լայնքը 15 մ. էր և երկայնակի կիսված էր պատերով երկու նեղլիկ փողոցի նախատեսված հետիոտների համար: Լայն կենտրոնական մուտքը սալահատակված էր քարերով և խոշոր խեցատներով ակներևաբար նախատեսված անիվավոր փոխադրամիջոցների համար:

Չնայած մետաղամշակման և մետաղագործության տեխնոլոգիայի կատարելագործմանը մետաղի իրերը դեռ քիչ են, ինչը բացատրվում է մոտակայքում հարուստ մետաղահանքի բացակայությամբ: Պղնձի և բրոնզի իրերից գտնվել են հատիչներ, ծակիչներ. մախաթներ, երկշեղբ դանակներ, դանակ-տեգեր և հայելիներ, օղեր ու մատանիներ: Իրերի մեջ նոր տիպ է կախիկով կնիքները և ձևավոր գլխիկով քորոցները՝ հաճախ երկպարույր կամ բազմաստիճան խաչի տեսքով:

Խեցեղենը սկզբնական շրջանում դեռ պահպանել է վաղ երկրագործական ժամանակաշրջանի խեցեղենին բնորոշ շքեղությունը: Զարդանախշը գերազանցապես միագույն է և թողնում է խայտաբղետ գորգի նախշի տպավորություն: Ալթին դեպեի նյութերի օրինակի վրա լավ երևում է գեոկսյուրյան ոճի զարդանախշի մանրացումը և աստիճանաբար դեգրադացումը: Այս գործընթացը զարգանում էր դուրգի օգտագործման տարածման զուգահեռ և վաղ բրոնզի ժամանակաշրջանի ավարտին զարդանախշված անոթների թիվը կտրուկ նվազում է: Բացի երկրաչափական նախշից հանդիպում են ծառերի սխեմատիկ պատկերներ և մանր ճյուղավորված կոտոշներով այծերի պատկերներ (Ակ դեպե): Արևելյան խմբի հուշարձաններում, որպես ուշ էնեոլիթյան շրջանի ժառանգություն տարածված էր նախշը կարմիր մակերեսին, մինչդեռ արևմտյան շրջանների խեցեղենում գերակայում է սպիտակա-կանաչավուն մակերեսը:

Նշանակալի փոփոխություններ են կրում նաև կավե արձանիկները: Վաղ փուլերում դրանք նստած կանանց արձանիկներ են, որոնք, թեև կոպտորեն, շարունակում են ուշ էնեոլիթյան ավանդույթները: Դրա մասին է վկայում բարձր գլխարկների առկայությունը: Ավելի ուշ փուլի արձանիկները նախանշում են գալիք ժամանակաշրջանի կանոնները: Կերպարի սեմանտիկայի տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում կրծքին ծալած ձեռքերում երեխային գրկած կնոջ արձանիկը՝ սյուժե, որն ակներևաբար հարաբերվում է պտղաբերության հավատալիքների հետ:

Կոպետ-Դաղի հյուսիսային, նախալեռնային դաշտավայրերի մշակութային համալիրների ծագումը բավականին հստակ է: Այն կազմավորվել է ուշ էնեոլիթյան մշակույթի հիմքի վրա հետագա փոփոխություններով ու աստիճանական դեգրադացմամբ: Մշակութային շերտերի ընդհատումներ չեն դիտվում և պահպանվում է նույն մարդաբանական տիպը դարաշրջանին համապատասխան չնչին փոփոխություններով:

Այս մշակութային և տեխնոլոգիական նորամուծությունները մոտեցնում են մեզ միջին բրոնզի դարաշրջանին երբ կազմավորվում է Նամազգա V տիպի բավականին յուրահատուկ հնագիտական համալիր, որը կրում է քաղաքայնացված մշակույթի բոլոր հատկանիշները: Այդ խեցեղենը բնորոշվում է բարակ պատերով անզարդ անոթներով, որոնք պատրաստվում էին դուրգի վրա և թրծվում էին երկհարկ հնոց-վառարաններում: Այդ իրերը աչքի են ընկնում ձևերի նրբագեղությամբ: Խեցեղենի հիմնական տիպերն են գավերը, սնամեջ բարձր ոտքի վրա սկիհ-

ները և բարձր նստուկով տարատեսակ անոթները: Մետաղյա իրերից տիպիկ են հաստ շեղբով և փոքր ուղիղ բռնակով դանակները, ձևավոր, այդ թվում նաև կենդանակերպ գլխիկներով քորոցները, ինչպես երկրաչափական, այնպես էլ կենդանակերպ պատկերներով կնիքները: Մանր քանդակում տարածվում են գալարվող օձաձև հյուսերով նստած կանանց արձանիկները: Դրանք կորցրել են իրենց երբեմնի նրբագեղությունը, դարձել են ավելի կոպիտ, մարմինների վրա կան նշաններ: Տարածքային առումով այս մշակույթը կենտրոնացվում է մերձկոպետդաղյան դաշտավայրում, որը բնակեցվել էր դեռևս վաղ երկրագործների կողմից: Դարաշրջանի վերջից սկսվում է Մուրհաբի դելտայի լայնածավալ յուրացումը: Այստեղ կազմավորվում է մի ամբողջ օազիս, որի կենտրոնը Քելելի բնակավայրն էր (Масимов, 1979):

Այդ ժամանակաշրջանում մշակութային և արտադրական գործընթացի կենտրոն են դառնում խոշոր բնակավայրեր Նամազգա դեպեն և Ալթին դեպեն, որոնցից վերջինս առավել մանրամասն է ուսումնասիրվել շնորհիվ սիստեմատիկ պեղումների (Массон, 1981 a): Արդեն իր իսկ կառուցվածքով Ալթին դեպեն տարբերվում էր նախորդ շրջանի վաղ երկրագործական բնակավայրերից: Այստեղ տարբեր հատվածներ ունեն տարբեր գործառութային նշանակություն: Այսպես բնակավայրի հյուսիսում գտնվում էր 2 հա. տարածք զբաղեցնող բրուտագործ արհեստավորների ընդարձակ թաղամասը, որտեղ կենտրոնացված էին ավելի քան 50 հնոց խեցեղենի թրծման համար: Ալթին դեպեի բնակելի թաղամասերը, ինչպես բոլոր էնեոլիթյան կենտրոններում, բաղկացած էին բազմասենյականոց կացարաններից, որոնք իրարից բաժանվում էին 1-2 մ. լայնությամբ փողոցներով: Սակայն նման պարզ կառուցապատված թաղամասերի շարքում աչքի է ընկնում մի ընդարձակ տարածք՝ «ազնվականության թաղամասը», որն ունի կանոնավոր հատակագիծ, ուղիղ անկյան տակ հատվող փողոցներ և հստակ ուղղանկյուն կամ քառակուսի հատակագծով ընդարձակ, լավ հարդարված տներ: Սկզբունքային նոր կառուցվածքային միավոր է 2 մ. բարձրությամբ աստիճանավոր աշտարականման կառույցը՝ «գլխավոր քուրմի տունը», ընդարձակ շտեմարանները, տնտեսական կառույցները և դամբարանային համալիրը: Վերջինս ներկայացնում է սենեկաշարք՝ տարբեր նշանակության սենյակներով սկսած օջախով ու զոհասեղանով սրբավայրից, վերջացրած բուն դամբարանային խցով, որի պատերի խորշերում դրվում էին կյանքի օրոք հասա-

րակությունում հավանաբար հատուկ դիրք զբաղեցրած մարդկանց գլուխներ: Սրբատեղիում տեղի էր ունենում թաղման ծեսի առաջին փուլը: Հարթակ-օջախի մոտ գտնվել են հեղման համար անոթներ, իսկ զոհասեղանի մոտ գտնվում էին տարբեր ծիսական իրեր, այդ թվում նաև սկավառականման կշռաքար և սև քարից սյուներ, ինչպես նաև զարդեր և ոսկուց փիրուզի ագուցմամբ պատրաստված ցլի ու գայլի գլուխներ: Խոշոր դամբարանները, որոնք կառուցվել էին վաղ բրոնզի ժամանակաշրջանում դեռ պահպանում էին իրենց նշանակությունը: Այս բոլոր փաստերը թույլ են տալիս բնորոշել Ալթին դեպեն որպես քաղաքային տիպի կազմավորվող բնակավայր, որին բնորոշ են սոցիալական շերտավորման դրսևորումները, որը հանդիսանում էր գյուղատնտեսության և արհեստների կենտրոն, ու նաև կատարում գաղափարախոսական առաջնորդության գործառույթներ:

Առևտուրն ավելի համեստ դեր ուներ Ալթին դեպեում, թեպետ այստեղ էին բերվում փղոսկրյա իրեր հին հնդկական Հարապայից: Կան մի շարք վկայություններ այս մշակույթի հետ կապերի մասին, այդ թվում նաև պրոտոհնդկական կնիքներ: Շրջանների միջև հարաբերությունների արդյունքում պղնձի հումքը ու լազուրիտը կանոնավոր բերում էին այստեղ: Ավելի վատ էր վիճակը անագի հարցում, որը միայն որպես բացառություն օգտագործվել էր հին համաձուլվածքներում:

Ալթին դեպեի բնակավայրի պաշտպանական համակարգը ավելի թույլ էր զարգացած: Դրա մասին է վկայում կենտրոնական մուտքը, որն ունի ավելի շատ հանդիսավոր քան պաշտպանական բնույթ: Գտածոների մեջ հազվադեպ են զենքերը, նույնքան հազվադեպ են կմախքների վրա ռազմական բնույթ կրող վնասվածքները: Ռազմական գործի թույլ զարգացումը Ալթին դեպեում որոշակիորեն բնութագրում է այդ դարաշրջանի հասարակությունը, որը խաղաղ զարգանում էր այն ժամանակի քաղաքակրթության ծայրամասում, քաղաքական հակասություններից ու Առաջավոր Ասիայի ռազմական մրցակցության ցնցումներից հեռու:

Երկրագործությունն ու անասնապահությունը մնում էին բնամթերքի ստացման կարևորագույն միջոցները: Մշակվող կուլտուրաներին ավելացել էր լոբազգիներին պատկանող նուտը (սիսեռը): Գործնականում ամեն տուն, լինի դա շարքային կացարան, թե «ավագանու» բարեկեցիկ տուն ուներ քարից թոնիր՝ հաց թխելու համար:

Նախկինի պես շատ են առաջնամասում ուղտի գլխով քառանիվ սայ-

լերի կավե մանրակերտերը: Դատելով այդ մանրակերտերից հատկապես ծանր կամ խոշոր բեռների տեղափոխման համար սայլերին լծում էին երկու ուղտ: Ամենայն հավանականությամբ քաշող ուժ կիրառում էին նաև դաշտերի մշակման ժամանակ: Ալթին դեպեի հնէակենդանաբանական նյութի ուսումնասիրությունները Ն. Մ. Երմոլովայի կողմից ցույց են տալիս, որ քաղաքային բնակիչները արդեն կորցրել էին կենդանու կազմաբանության մասին գիտելիքները և միս կտրելու ժամանակ ջարդում էին խոշոր ոսկորները, մինչդեռ վաղ շրջանի որսորդներն ու հովիվները սովորաբար սահմանափակվում էին ջլերը կտրելով: Հոտերը պաշտպանելու համար հատուկ բուծվել էր խոշոր, կարճ մռութով ու խոշոր ծնոտով շան տեսակ: Կավե արձանիկները պատկերում են նաև ամրակազմ, թույլ ընդգծված ականջներով ու կարճ վեր ցցված կտրված պոչերով շների: Ն. Մ. Երմոլովան ենթադրում է, որ դրանք կտրած պոչերով և ականջներով հովվաշներ են, որոնք մոտ են մեր օրերի Թուրքմենստանի հովվաշներին (Ермолова, 1977): Ջեյթունյան նեոլիթում հայտնի էր ընդամենը մի ընտելացված շուն, որն իր չափով շատ չէր տարբերվում չախկալից: Դա վկայում է, որ բնակավայրի 3000-ամյա զարգացման ընթացքում Ալթին դեպեի սելեկցիոներները, արդեն բուծել էին շան տեսակ, որը կարող էր դիմագրավել գայլերին: Հավանաբար սելեկցիոն ճանապարհով էին փոխվում ընտանի կենդանիների հիմնական տեսակները:

Բայց առավել առաջընթաց են ապրում այլ տիպի արտադրական գործունեության ոլորտները՝ խեցեգործությունը, մետաղագործությունն ու մետաղամշակումը: Ալթին դեպեի խեցեղենի մեծ մասը պատրաստվել է արագ պտտվող դուրգի վրա և շատ լավ թրծված է: Գերակշռում են ձգված անոթները և հատուկ ուշադրություն էր դարձվում սլացիկ նուրբ գծերին: Զարդանախշը գործնականում բացակայում է: Միայն հազվադեպ քթիկ-ծորակներն էին զարդարվում կենդանու գլխի տեսքով, և, երբեմն հանդիպում են կենդանակերպ անոթներ: Կավին հարդ էին ավելացնում միայն ձեռածեփ խոհանոցային անոթների պատրաստման համար: Խոհանոցային անոթները երկու տիպի են. ցածր պատերով տափակ թավաներ և տափակեցված գնդի տեսքով կաթսաներ, որոնք վզիկի մոտ ունեն քթիկ-ծորակներ: Ալթին դեպեի խեցեղենի յուրահատկությունը՝ բռնակների գրեթե լիակատար բացակայությունն է: Դա վաղերկրագործական շրջանից մնացած տեղական մշակութային ավանդույթի բնորոշ գծերից է:

Մետաղամշակման զարգացման մասին խոսում է մետաղյա իրերի

բազմազանությունը: Հատող գործիքները ներկայացված են խոշոր ուրագներով, որոնցից մեկն ունի երկու դարձյակ: Կտրող գործիքների թվում են միաշեղբ կամ երկշեղբ դանակները, որոնք փոքր կոթունով միանում էին բռնակին: Առավել տիպիկ են տերևաձև շեղբերը: Եռանկյունաձև նետասլաքներն ունեն փոքր կոթառ: Պահպանվել են նաև կայծքարից նետասլաքներ, բայց ինչպես ցույց են տալիս հետքաբանական ուսումնասիրությունները, դրանք մեծամասամբ օգտագործվել են որպես շաղափներ քարե անոթների պատրաստման ժամանակ: Հայտնի է բրոնզե մանգաղ, որի շեղբը բռնակի նկատմամբ ուղիղ անկյան տակ է: Արդուզարդի իրերից կարելի է նշել կողքից բռնակ ունեցող ձվածիր հայելիներ, քունքային օղեր, ապարանջաններ, բրոնզե և արծաթյա մատանիներ: Իրերի առանձին խումբ են կազմում երկար քորոցները, որոնք հայտնվել էին դեռ ուշ էնեոլիթում, երբ դրանց գլխիկները բահի տեսք ունեին: Այժմ հանդիպում են պարույրի, կիսալուսնի, և սմբակավոր կենդանիների գլուխների պատկերներ: Հավանական է, որ այդ իրերն ունեին կրկնակի կիրառություն՝ օգտագործվում էին հագուստին ամրացնելու համար և միաժամանակ մատնանշում էին հատուկ սոցիալական դիրք զբաղեցնող անձանց: Ոսկյա թիթեղից պատրաստվում էին մատանիներ և ուլունքներ, ընդ որում ալեբաստրե հիմքի վրա հաճախ դիտվում էր ոսկյա բարակ շերտ:

Մետաղյա իրերի հատուկ խումբ են կազմում կաղապարի մեջ ձուլված խաչաձև, բրգաձև, կամ ձվածիր բրոնզից կամ ցածրորակ արծաթից պատրաստված կնիքները: Կնիքների կենտրոնում, որպես կանոն, ինչ-որ պատկերներ կան, որոնք աշխուժացնում են կնիքների տեսքը: Կենդանակերպ կնիքները պատկերում են այծեր և այլ սմբակավոր կենդանիներ, կատվազգիներ, արծիվներ, կան նաև երևակայական պատկերներ, ինչպես օրինակ կատվազգի գիշատչի մարմնով երեք գլխանի վիշապ, որի գլուխներից մեկը գիշատիչ թռչնի, մյուս երկուսը՝ սողունի, հավանաբար օձերի գլուխներ են: Մի քանի կնիքներ ունեն կիսալուսնի ձև, որի մեջ պատկերված է գալարվող օձ:

Դիտարկվող հնագիտական համալիրների բնորոշ հատկանիշներից են կավե արձանիկները, որոնց մեջ և՛ քանակով, և՛ կերպարի արտահայտչականությամբ հատուկ տեղ են գրավում կանացի արձանիկները: Այդ արձանիկները պատկերում են ձեռքերը կողքի պարզած կանանց: Հազվագյուտ դեպքերում ձեռքերը քիչ ծալված են, որը վկայում է էնեոլի-

թի շրջանի հետ ծագումնաբանական կապի մասին: Սակայն ամենայն հավանականությամբ տվյալ կերպարը մոռացվել էր բրոնզե դարում և փոխարինվել «գրկող ժեստի» արձանիկներով: Առավել մանրամասն մշակվում էին արձանիկների վերին մասերը: Դիտողի ուշադրությունը գրավում են չափազանց մեծ շեղանկյունաձև աչքերով, երկար վզով կանանց գլուխները: Դեմքը երիզված է երկու բարակ հյուս-օձերով: Երբեմն ծեփածո հյուսը իջնում է մեջքին: Որոշ, առավել մանրակրկիտ մշակված գլուխների երկու կողմում, աչքի մակարդակի վրա երևում են օձերի փոքր գլուխներ, որոնք կարծես պոչի վրա բարձրացած գրկում են վիզն ու գլուխը: Մանրամասների թվին են պատկանում տարբեր տիպի գլխարկները և վիզը գրկող վզնոցները: Մարմինները զուրկ են թե՛ ծեփածո, թե՛ փորագիր տարրերից և դրանով ավելի է ընդգծվում արձանիկների վերին մասի ծանրությունը: Մարմնի ներքևի մասում պատկերված է իգական սեռի խորհրդանիշ՝ եռանկյունին, իսկ ավելի վերև երբեմն պատկերված է ծառ: Բազմաթիվ արձանիկների եռանկյունու վրա կան նաև խազեր, որոնք հավանաբար ներկայացնում են կոնքի շորեր կամ գոտիներ:

Հատկապես հետաքրքիր են սովորաբար ուսերին, իսկ երբեմն մարմնի հետևի մասում արված խազերով մի շարք արձանիկներ (Массон, Сарианиди, 1973): Այս նշանները պայմանականորեն կարելի է միավորել վեց խմբում, թեև չի բացառվում, որ մանրակրկիտ ուսումնասիրությունը կարող է վեր հանել և այլ խմբեր: Այդ նշանների մեջ հատկանշական են բույսերի ճյուղերը, զիգզագները և բազմաթև աստղերը: Դա, իհարկե, մոգական խորհրդանիշերի ինչ-որ տեղ պիկտոգրաֆիկ գրին մոտ հատուկ համակարգ էր, որը կայուն տեղ էր զբաղեցնում հարավային թուրքմենստանյան հասարակությունում զարգացած բրոնզի դարաշրջանում: Նկատվում է որոշակի կապ առանձին նշանների և գլխարկների, վզնոցների ու որոշ այլ տարրերի միջև: Որպես կազմավորված հաստատուն տիպ արձանիկների որոշ տարբերակների առկայությունը արտացոլում է Ալթին դեպեի պանթեոնում մի շարք աստվածություններ ու կանացի ոգիներ, որոնք, աստիճանաբար, ինչպես դա բնորոշ է զարգացած քաղաքակրթությունների փուլին, ունեին մասնագիտացված գործառույթ: Այսպես, ճյուղը կարող էր խորհրդանշել բուսականության աստվածությանը, զիգզագը՝ ջրի աստվածությանը, բազմաթև աստղը՝ (որն ի միջի այլոց մոտ է Ինանա-Իշտարի խորհրդանիշին) երկնքի աստվածությանը: Համենայն դեպս այդ արձանիկները, որպես սկզբ-

բունքորեն նոր երևույթ կազմում են Ալթին դեպեի մշակութային համալիրների բնորոշ գիծը:

Նամազգա V տիպի համալիրը ձևավորվում է նախորդ՝ վաղ բրոնզի մշակույթի հիման վրա, որի շերտերը առանց ընդհատման գրեթե բոլոր դեպքերում ծածկվում են Նամազգա V շերտերով: Ավանդույթների կապը ակներև է բոլոր իրերում. խեցեղենում, մետաղյա իրերում և շինարարության մեջ: Նույնիսկ մոնումենտալ մուտքը, կառուցված Ալթին դեպեում վաղ բրոնզի ուշ փուլում, շարունակում էր գործել Նամազգա V ժամանակ: Սակայն այս բոլոր ոլորտներում ակնհայտ է մշակութային նորամուծություն, նոր մոդելների և էտալոնների հաստատում:

Որոշ դեպքերում, ինչպես դա երևում է խեցեղենի արտադրության մեջ, նոր ստանդարտները հաստատվում են նոր տեխնոլոգիայի տարածմամբ, որն ազդել է անոթների ձևի ստեղծման սկզբունքորեն նոր եղանակի վրա: Այլ դեպքերում, ինչպես մանր արձանիկների տիպաբանական նորամուծությունը հավանաբար խթանվել է նոր գաղափարախոսական մոտեցումներով: Առկա է նաև մշակութային փոխառնություն սելեկցիայի միջոցով, որը դիտվում է մոնումենտալ ճարտարապետության մեջ, որտեղ կիրառվում է Միջագետքի ճարտարապետների փորձը: Տվյալ նորամուծությունների կայուն սինթեզը դարձավ որոշիչ քաղաքակրթության նոր տիպի կազմավորման համար, որը ձևավորվում էր հարավային Թուրքմենստանում տեղական՝ ուշ էնեոլիթյան ավանդույթների հիման վրա:

Այսպիսով, հասարակությունում և մշակույթում տեղի ունեցան որակական փոփոխություններ, որոնք թույլ են տալիս խոսել նոր՝ հին արևելյան տիպի քաղաքակրթության հանդես գալու մասին:

Դեռ վաղերկրագործական դարաշրջանում ստեղծված ոռոգովի երկրագործության և անասնապահության համակարգի համադրումը հուսալի հիմք էր սննդամթերք ստանալու համար:

Տեխնոլոգիական առաջընթացի հիմնական գիծը գնում էր առանձին արտադրությունների կատարելագործման՝ մասնագիտացված արհեստների առաջացման ուղիով: Այսպես, մետաղամշակման և մետաղագործության բոլոր գործընթացներում նկատվում է բարձր արհեստավարժություն: Հին վարպետները լավ գիտեին մետաղի ու տարբեր մետաղական համաձուլվածքների հատկանիշները: Օրինակ՝ կռման մեթոդով պատրաստվող իրերի համար, նրանք խուսափում էին օգտագործել արճիճի

բարձր տոկոսայնությամբ պղինձ, մինչդեռ հալեցման մեթոդով իրերի պատրաստման ժամանակ արճիճի տոկոսը բավականին բարձր էր: Արդյունքում ստացվում էին համաձուլվածքներ, որոնք ունեին հալման բարձր հատկանիշներ և կիրառվում էին այնպիսի իրերի պատրաստման համար, որոնք չէին պահանջում դարբնի հավելյալ աշխատանք: Մետաղաձուլման գործընթացի առանձնացումը դարբնի աշխատանքից ավելի ու ավելի էր նեղացնում մասնագիտացումը, ստեղծելով տեխնոլոգիական նախապայման մետաղամշակումը, որպես առանձին արհեստ առանձնացնելու համար:

Տեխնոլոգիական կատարելագործման և աճող մասնագիտացման նման երևույթներ նկատվում են խեցեգործության մեջ, որը մանրակրկիտ ուսումնասիրել է Է. Վ. Սայկոն (Сайко, 1982): Անոթների բոլոր հիմնական ձևերը, սկսած փոքր կճուճներից, մինչև սննդի պահեստավորման համար նախատեսված խոշոր անոթները պատրաստվում էին արագ պտտվող դուրգի վրա: Բոլոր բնակավայրերում գտնվել են դուրգի մասեր կավե մանր սկավառակների տեսքով: Դուրգի կիրառումը 10-20 անգամ մեծացրել էր արտադրողականությունը, թույլ էր տվել ստանդարտացնել անոթների հիմնական ձևերը և դրա հետ պահանջում էր բարձր արհեստավարժություն: Որոշիչ նշանակություն ունեցան ջերմատեխնիկայում տեղի ունեցած փոփոխությունները, երբ սկսեցին կիրառվել երկհարկ հնոցները և թրծման խցիկները: Ուշադրությունը կենտրոնանում էր ամբողջ խցում կրակի կայուն ջերմաստիճանի և թրծման պայմանների պահպանման վրա:

Այդ տեխնոլոգիական նորամուծությունները խթանում էին արհեստների և երկրագործության զարգացումը: Տեղի էր ունենում մասնագիտացված արհեստների տարածքային կենտրոնացում:

Ալթին դեպեի հյուսիսում կազմավորվում է արհեստավորներով բնակեցված ընդարձակ շրջան, որտեղ բրուտները և հավանաբար այլ արհեստների ներկայացուցիչները ապրում ու աշխատում էին: Դա արդեն մասնագիտացված արտադրության այլ սոցիալական կազմակերպություն էր, որը տարբերվում էր համայնքային արհեստավորներից, որոնք ապրում էին ցրված՝ համայնքի զբաղեցրած տարածքում:

Բարդանում է նաև հասարակության սոցիալական կազմակերպումը, որը կարելի է ուսումնասիրել երկու աղբյուրների՝ կացարանների և դամբարանների տվյալների հիման վրա: Ալթին դեպեի կառույցները վաղ

բրոնզի դարաշրջանում փոքր կացարաններ էին և դատելով չափերից նախատեսված էին փոքր ընտանիքի համար (Кирчо, 1986): 5-6 կացարան միավորվում էին մի խոշոր միավորի՝ թաղամասի, մեկ ընդհանուր սրբատեղիով:

Դատելով բոլոր շինությունների չափերից, մեծ ընտանիքների թաղամասը, ինչպես և ուշ էնեոլիթում, կազմում էին հասարակության հիմնական բջիջը: Բնակելի-տնտեսական շինություններին անմիջապես կից տեղադրված էին դամբարանները, որոնք իրենց քանակով և սեռատարիքային դասակարգմամբ պատկանում էին ինչպես փոքր ընտանիքների, այնպես էլ որոշ դեպքերում ավելի խոշոր կոլեկտիվների: Մեծահասակների թաղման գույքը հարուստ չէ, և այդ ֆոնի վրա աչքի են ընկնում առանձին կանանց թաղումներ, որտեղ բացի գունազարդ խեցեղենից կան նաև կրաքարային մարմարից անոթներ, բրոնզե իրեր և զարդեր: Սովորաբար յուրաքանչյուր բացված շերտում գտնվել է մեկական այդպիսի երիտասարդ կնոջ թաղում ոչ ստանդարտ գույքով, որի մեջ մասնավորապես կան քարե ճրագամաններ: Ամենայն հավանականությամբ դրանք քրմուհիների թաղումներ են: Սակայն նման բարեկեցության պայմաններում ունեցվածքային տարբերությունները այդքան էլ վառ չեն արտահայտվում:

Միջին բրոնզի ժամանակաշրջանում այս պատկերը սկզբունքորեն փոխվում է: Մի շարք փաստեր վկայում են այն մասին, որ Ալթին դեպեի հասարակության մեջ տեղի է ունեցել նշանակալից սոցիալական շերտավորում, որն արտացոլվել է բնակչության նյութական վիճակում և կենցաղում: Բավականին հստակ արտահայտված է սոցիալական և ունեցվածքային կարգավիճակի երեք խումբ (Массон, 1981 a): Առաջին խմբի համար բնորոշ են մեծ բազմասենյականոց կացարաններ, որտեղ, ինչպես և ուշ էնեոլիթում առանձնանում են ընդհանուր խոհանոցով և տնտեսական բակով կացարաններ փոքր ընտանիքների համար: Կացարանները դասավորված են խառը և տները բաժանող փողոցները նեղ են և ոլորապտույտ: Այդպիսին է, մասնավորապես, արհեստագործների թաղամասը: Ոսկրային մնացորդների մեջ գերակայում են վայրի կենդանիների ոսկորները: Հավանաբար այս թաղամասի բնակիչները չունեին խոշոր նախիրներ և անասնապահությունից չէին ստանում բավարար մսամթերք, որպես իրենց արտադրության համարժեք վարձ: Կացարանների մոտ գտնվող դամբարաններում միակ թաղման նյութը կազմում էին եր-

բեմն հանդիպող խեցեղեն անոթները: Հավանաբար այդ թաղամասի բնակիչները կամ ընդհանրապես չունեին անձնական զարդեր, կամ չէին դնում դրանք գերեզմանում, քանի որ դա այդպիսի կոլեկտիվի համար անթույլատրելի շքեղություն կլիներ:

Երկրորդ խմբի համար բնորոշ է առանձին փոքր կացարաններում 3-5 սենյակներում բնակվելը: Ադ տներն ունեն նաև հատուկ տնտեսական բակ և խոհանոց:

Ընդհանուր հատակագծում չկա կանոնավորություն, նեղլիկ փողոցները հաճախ փոխում են իրենց ուղղությունը, դառնալով ըստ էության ճեղքեր տների միջև, որոնց առանցքի ուղղությունները ևս տարբեր են: Ունևոր բնակիչների դամբարաններում և խցերում հաճախ դնում էին տարբեր անձնական զարդեր, այդ թվում նաև կիսաթանկարժեք քարերից՝ լազուրիտից, փիրուզից, սարդիոնից ու ագաթից:

Ոսկրային մնացորդներում գերակայում են ընտանի կենդանիների ոսկորներ:

Վերջապես բնակչության երրորդ խումբը՝ բնակավայրի այն բնակիչներն էին, ովքեր ապրում էին «ազնվականության թաղամասում», որն աչքի էր ընկնում կանոնավոր հատակագծով: Այստեղ գտնվել են ընտանի կենդանիների ոսկորներ, և Ն. Մ. Երմոլովան նշում է, որ ի տարբերություն այլ պեղավայրերից գտնված ոսկրաբանական նյութի, կենդանիների ոսկորները գրեթե փշրված չեն, հավանաբար, որպեսզի հնարավոր լիներ ստանալ ոսկրածուծը: Այս խավին պատկանող կանանց զարդերը, դատելով դամբարանների գույքից բավական բազմապիսի են. բրոնզե և արծաթյա մատանիներ, վզնոցներ, ապարանջաններ, ճակատակալներ և նույնիսկ ուլունքներից պատրաստված հավաքովի գոտիներ: Կացարանների մոտ գտնվող դամբարաններում, բացի բազմապիսի թաղման գույքից, քիչ չեն նաև այնպիսի կարևոր իրերը, ինչպիսիք են կնիքները: Անկասկած այդ թաղամասի բնակիչները «ազնվականությունն» ու հարուստ քաղաքացիներ էին:

Սպասարկողների հիմնական միավորը փոքր ընտանիքներն էին: Շատ հետաքրքիր է, որ Ալթին դեպեում բացակայում էին խոշոր խոհանոցային կաթսաները, որոնք նախատեսված էին խոշոր կոլեկտիվների սնունդը պատրաստելու համար: Փոքր 3-4 լիտր տարողությամբ կաթսաները այն հիմնական անոթներն էին, որոնցում այդ քաղաքի բոլոր խմբերի բնակիչները պատրաստում էին կերակուր: Հետաքրքիր է նաև քարից

պատրաստված աշխատանքային գործիքների (որոնք մանրակրկիտ ուսումնասիրվել են Գ. Ֆ. Կորոբկովայի կողմից) (Коробкова, 1983, 1985) առկայությունը տներում: Դրանք ցույց են տալիս, որ բոլոր տներում մշակում էին հացահատիկ և գործում էին: Երբեմն այս կամ այն թաղամասի տներից մեկում գտնվել են մետաղամշակման հետ կապված աշխատանքային գործիքներ: Դա կարող էր լինել թաղամասի դարբնի տունը, իսկ դարբնի աշխատանքը կարելի է դիտել համայնական արհեստի ավանդույթների պահպանության համատեքստում: Համայնքը, տվյալ դեպքում մեծ ընտանիքը, պահպանում էր իր նշանակությունը որպես առանձին միավոր, որտեղ համադրվում էր արտադրությունն ու գյուղատնտեսությունը: Դրա հետ մեկտեղ Ալթին դեպեի ամբողջ հասարակությունը որոշակի պայմաններում պետք է գործեր որպես մեկ ամբողջություն:

Մասնագիտացած հովիվների աշխատանքը բաշխվում էր քաղաքի բնակիչների միջև: Տներին կից չեն գտնվել խոշոր պահեստներ և շտեմարաններ, ինչը խոսում է հացահատկի պահպանման ընդհանուր հորերի առկայության մասին: Ամեն տանը հացահատիկ աղալու համար գործիքների առկայությունը վկայում է, որ հողագործներից ստացված ապրանքի բաշխումը արտահայտվում էր հացահատկի տեսքով, որը դեռ հարկավոր էր մշակել:

Դատելով դրանց չափերից, տները նախատեսված էին փոքր ընտանիքների համար: Ինչպես և վաղ բրոնզի դարաշրջանում և տարածքային, և գաղափարախոսական (ընդհանուր դամբարան, ընդհանուր սրբատեղի) ընդհանրություն ունեցող միավորները վերածվում էին ավելի խոշոր սոցիալական միավորի, որն ամենայն հավանականությամբ մեծ ընտանիքներից բաղկացած համայնք էր: Բարդ շերտավորումը, որը կարելի է նկատել Ալթին դեպեի հասարակությունում կարելի է դիտարկել որպես կառուցվածքի նախահիմք: Այսպիսով, քաղաքային տիպի բնակավայրի կազմավորումը իր ներքին բարդ կառուցվածքով և հասարակության սոցիալական շերտավորումով տեղի էր ունենում միաժամանակ և դրանց միջև անկասկած կար պատճառա-հետևանքային կապի բարդ համակարգ:

Վերը նկարագրված երեք խումբ թաղումների հետ մեկտեղ կան թաղումներ, որոնց հարստությունն ու հազվագյուտ վարկանիշային իրերով հագեցվածությունը դուրս է գալիս ստանդարտների սահմաններից: Այդպիսին են երկու կանանց թաղումները, որոնցից մեկում բացի հարուստ

ոսկյա զարդերից գտնվել է եռագլուխ վիշապով արծաթյա կնիք: Մյուս դամբարանում գտնվել է արդուզարդի և շպարի հարուստ հավաքածու պատրաստված ոսկուց ու փղոսկրից: Հետաքրքիր է տղամարդու թաղումը, որտեղ բացի խեցեղենից և ուլունքներից կային վարկանիշային բնույթի իրեր՝ քարից պատրաստված երկու «սյուն» ու մի երկար գավազան: Գավազանի զարդարված մասեր երբեմն գտնվել են «ազնվականության թաղամասի» տների պեղումների ժամանակ; Հավանաբար դրանք հատուկ սոցիալական դիրք ունեցող անձանց բնորոշիչ իրերից էին: Նյութի հարստությամբ և բազմազանությամբ աչքի է ընկնում քրմերի դամբարանը: Դրա հետ մեկտեղ Ալթին դեպեում դեռ չեն պեղվել ռազմական առաջնորդների կամ «թագավորական» թաղումներ: Ըստ ամենայնի Նամազգա V ժամանակաշրջանում Ալթին դեպեն իրենից ներկայացնում էր բնականոն ձևով նստակյաց երկրագործների հասարակության հիման վրա կազմավորվող քաղաքային միավոր: Այն ակնհայտորեն տարբերվում է պարզ, խոշոր երկրագործական բնակավայրից, և, նկատի ունենալով խոշոր սրբատեղիների առկայությունը, կարող է բնութագրվել որպես տաճարային քաղաք:

Տաճարային համալիրում և «ազնվականության» թաղամասում հավանաբար համաքաղաքային նշանակություն ունեցող խոշոր շտեմարանների առկայությունը ցույց է տալիս, որ ավագանին և քրմական դասը աստիճանաբար մոնոպոլիզացնում էին քաղաքի համայնքի ֆոնդ հանդիսացող ապրանքի հասարակական պահպանումն ու բաշխումը: Բարդ է նաև այդ հասարակության մշակութային ներուժը: Բարեկեցիկ նստակյաց կենսաձևը շարունակվում էր ինչպես վաղերկրագործական շրջանում, բայց դրա հետ մեկտեղ հասարակության մեջ տեղի ունեցած գործընթացների շնորհիվ այն դառնում է տարբերակված: Դա արտահայտվում է երեք տիպի կացարաններում: «Ազնվականության» թաղամասի տները ընդարձակ են հարմարավետ և մանրակրկիտ հարդարված: Ըստ ամենայնի տարբերությունը առկա էր նաև կենցաղի այլ ոլորտներում: Հենց այս հատվածում արձանագրվել են կանացի հարուստ արդուզարդի բազմազանության վկայություններ: Այս թաղամասի կանանց կոլեկտիվ թաղումներում բացի վզնոցներից, մատանիներից ու ապարանջաններից, ննջեցյալների կոնքերի վրա գտնվել են մի քանի շարք ուլունքներից կազմված գոտիներ, որոնք հավանաբար կարվում էին կտորի վրա: Գանգերի վրա կան մանր փայլուն ուլունքներ, երբեմն ինչ-որ նախշի ձևով:

Հավանաբար այդպես էին զարդարված գլխարկները, որոնք նրանք կրում էին: Նկատվում են նաև նուրբ բրդի գործվածքների հետքեր, որոնք կարող էին լինել կամ հագուստի կամ պատանքի մնացորդներ, մինչդեռ արհեստավորների թաղամասում, ինչպես և ավելի վաղ՝ էնեոլիթում մահացածներին փաթաթում էին խսիրի մեջ, որի դաջվածքները հաճախ գտնվել են պեղումների ժամանակ:

Հետաքրքիր է նաև, որ «ազնվականության» թաղամասում նույնիսկ շարքային իրերը բարձր որակի են: Այստեղ շատ են քարե իրերի բեկորներ, կան նաև բրոնզե իրեր: Եթե շքեղ գունազարդ խեցեղենը զարդարում էր հասարակ բնակիչների և ազնվականության կենցաղը հավասարապես, ապա բարձր խավը օգտագործում էր, ինչպես նշում է Չայլդը (Чайлд, 1956), դատելով միջագետքյան նյութերից՝ թանկարժեք սպասք, պատրաստված քարից և մետաղից: Նույնիսկ «ազնվականության» թաղամասի տների ավերակներում կամ դամբարաններում գտնված կանանց արձանիկները ավելի նրբագեղ են և մանրակրկիտ մշակված: Պատահական չէ, որ սոցիալական վերնախավի գերեզմաններում կան հայելիներ: Տեղական գեղեցկուհիները ունեին բավական արդ ու զարդ հագնելու և շտկվելու արդուզարդի համար նախատեսված այդ կարևոր իրի առջև:

Մշակութային մակարդակի զարգացման էական ցուցանիշը՝ մոնումենտալ ճարտարապետության զարգացումն էր: Ըստ էության գլխավոր մուտքի կառուցումը խոշոր աշտարակ-մույթերով այդ տիպի ճարտարապետության զարգացումն է: Ավելի նշանակալից է հատուկ սրբազան կենտրոնի կառուցումը, որի համար օգտագործվել է վաղ բրոնզի ժամանակաշրջանում կառուցապատված բլրի տարածքը Ալթին դեպեի արևելյան ծայրամասում: Այստեղ, համալիրի գոյության առաջին փուլում կառուցվել էին տարբեր շինություններ՝ «քրմի տուն», դամբարան, երկու բակ, որոնցից մեկը (հավանաբար հավաքատեղի) սալահատակված էր աղյուսներով, իսկ մյուսում, որտեղ հավանաբար կատարվում էին ծիսական զոհաբերություններ տեղադրված էր օջախ:

Համալիրի գերակայող շինությունը՝ եռաստիճան աշտարակն էր, որի ճակատային մասը ուներ մոտ 21 մ. լայնություն և 8-10 մ. բարձրություն: Հետագայում աշտարակը մեծացրել էին և ավելի վաղ կառուցված «զիկկուրատը» մնացել էր թաղված հում աղյուսի զանգվածի մեջ: Դրա կողքին կառուցել էին 3 մ, բարձրությամբ հում աղյուսից հարթակ, որի վրա

գտնվում էր խոշոր շտեմարան: Ամբողջ համալիրի գլխավոր արևելյան ճակատը 55 մ. էր և հարդարված էր հատակագծում եռաստիճան որմնասյուներով: Ինչպես աստիճանաձև շինությունների, այնպես էլ հում աղյուսի հարթ մակերեսը կտրող որմնասյուների գաղափարը պատկանում է միջագետքյան ճարտարապետական լուծումներին, որոնք կազմավորվել են հարավային Միջագետքում մ.թ.ա. IV հազարամյակի վերջում և լավ են ներկայացված մ.թ.ա. III հազարամյակի բոլոր հուշարձաններում:

Ամբողջ բնակավայրի գաղափարախոսական կենտրոն հանդիսացող այդպիսի խոշոր համալիրի գոյությունը նշանակում է սկզբունքային փոփոխություններ համեմատած վաղերկրագործական շրջանի հետ, երբ ծիսական գործառույթները հաճախ բաշխված էին այդ բազմաբնակարանային տուն-զանգվածների կազմում: Նշանակալից է նաև համալիրի սեմանտիկ ուղղվածությունը: Պեղումների ժամանակ կանանց կավե արձանիկներ գործնականում չեն հանդիպել, թեև դրանք բերքառատության աստծո պարտադիր ուղեկիցներն են: Գտնված իրերը, նախ և առաջ ճակատին լուսնի նշանով ցլի գլուխը նշում է այդ համալիրի կապը տղամարդու աստրալ աստծո հետ, որը մոտ է Նաննա-Սինու աստծուն: Լուսնի աստված Նաննայի խորհրդանիշներից է երկնային կարմիր ցուլը, որին և ձոնված էր Ուրում կառուցված Լուսնի աստծո հայտնի զիկկուրատը: Ամենայն հավանականությամբ նման աստվածություն կար նաև Ալթին դեպեի հավատալիքների համակարգում, ինչը արտացոլվել է քրմերի դամբարանների ծիսական գույքում: Այդ աստվածությունը խորհրդանշում էր գերագույն միասնություն, որը գերակայում էր փոքր համայնքային կոլեկտիվներում, որոնք կազմում էին որակապես նոր համակարգ՝ քաղաքային համայնք: Գաղափարական նշանակալից փոփոխությունների մասին է վկայում ոճի փոփոխությունը կանանց աստվածությունների արձանիկներում: Ծավալային մոդելավորման փոխարեն, որ բնորոշ էր էնեոլիթին, գալիս է պայմանական-տափակ ոճը: Բայց դա արվեստի անկում կամ ռեալիզմի ավանդույթների կորուստ չէր, որ վառ արտահայտվում է արվեստի այլ օրինակներում՝ փոքր արձանիկներում, և, մասնավորապես, կենդանակերպ արձանիկներում: Տեղի էր ունենում սոցիալական հոգեբանությամբ պայմանավորված գեղագիտական կանոնների փոփոխություն: Միգուցե այդ փոփոխությունը պայմանավորված էր որոշակի կրոնական համակարգի կազմակերպմանն ուղղված առաջին քայլերի հետ, որ գալիս էր փոխարինելու տարբեր սովորույթների, հավա-

տալիքների ու ծեսերի: Կազմավորվող պանթեոնը պահանջում էր նոր դրսևորումներ և արդյունքում առաջ եկան կանացի կավե արձանիկներ՝ ընդգծված ահռելի աչքերով, որպես գերբնական իմաստության և խորաթափանցության խորհրդանիշ: Կազմավորվող քաղաքակրթությունը կրում էր էական փոփոխություններ կենսակերպի բոլոր ոլորտներում: Այսպիսով, հարավթուրքմենստանյան նյութերը թույլ են տալիս դիտարկել գրեթե գծային զարգացում արխայիկ երկրագործներից դեպի բարդ հասարակություն: Սակայն մ.թ.ա. II հազարամյակում տեղի են ունենում դեպքեր, որոնք ցույց են տալիս կոնկրետ պատմական իրավիճակի հակասությունը: Հին ավանդական կենտրոնները Ալթին դեպեն և Նամազգան Թուրքմենստամնի հարավում անկում են ապրում և հակառակը՝ ուրբանիզացված մշակույթները ակտիվորեն յուրացնում են նոր տարածքներ Մուրհաբի դելտայում և Ամուդարյայի միջին հոսանքում: Ալթին դեպեի անկումը, ինչպես ցույց են տալիս պեղումները, տեղի է ունեցել աստիճանաբար և կապված չի եղել ինչ-որ աղետալի դեպքերի հետ: Ամենայն հավանականությամբ բնակիչները պարզապես լքում էին տները, տանելով իրենց ունեցվածքը և միայն հազվադեպ ուրախացնում են հնագետներին մոռացված կավամաններով, որոնք, հավանաբար, մեծ արժեք չէին ներկայացնում իրենց ամենօրյա կյանքում: Չի բացառվում, որ բնակավայրի լքումը խթանվել է տարածքի կլիմայի չորայնացման գործընթացով, որի մասին հավաստիորեն վկայում է Կզլկումի տափաստանների որսորդների ուսումնասիրությունը (Виноградов, Мамедов, 1975): Չի կարելի մոռանալ նաև հողի աղակալման, որպես արհեստական ոռոգման կոմնակի արդյունքի մասին: Ինչ էլ որ եղած լիներ, մերձկոպետդաղյան օազիսները կորցնում են իրենց նշանակությունը, որպես մշակութային զարգացման կենտրոններ մ.թ.ա. II հազարամյակում և ինքնաբուխ զարգացման կենտրոնը տեղափոխվում է արևելք:

Այսպես, Մուրհաբի հին դելտայի վտակներից մեկի երկայնքով մ.թ.ա. II հազարամյակում կազմավորվում են մի շարք օազիսներ, որոնց մշակույթը համահունչ է Ալթին դեպեի համալիրի վերին շերտերին: Այստեղ մենք տեսնում ենք խեցեղենի նույն հիմնական ձևերը, կավե արձանիկների ու կնիքների նույն տիպերը: Օազիսի բնակատեղիները գտնվում էին իրարից 3-4 կմ. հեռավորության վրա: Դրանցից ամենախոշորը Քելելի I էր: Այստեղ ներկայացված է խոշոր տնտեսական-բնակելի զանգվածների նոր տիպ, որը զարգացնում էր Ալթին դեպեի «ազնվականու-

թյան թաղամասի» հստակ պլանավորված կացարանների շինարարության ավանդույթը: Հատակագծում քառակուսի, խոշոր կացարանները զբաղեցնում էին 800 քառ. մ. տարածք: Եզրագծով անցնում էր միջանցք, որը շրջափակում էր տարածքը, կենտրոնում բավականին ընդարձակ բակը ազատ էր, իսկ բակի շուրջը կառուցապատված էր 2-3 սենյականոց կացարաններով: Նման տներ պեղվել են Քելելիի օազիսի այլ, ավելի փոքր բնակավայրերում: Այստեղ պեղվել է նաև բնակավայրի նոր տիպ, որն անհայտ էր նախալեռնային գոտում: Դա գրեթե քառակուսի ամրոց է, շրջապատված պարսպով և երկու կողմից ուղղանկյուն աշտարակներով: Հատակագծով այն մոտ է վերոհիշյալ քառակուսի կացարաններին, բայց անհամեմատ գերազանցում է իր չափերով (127x128 մ.): Նման ամրացված և պաշտպանված բնակավայրերը, որոնք ամբողջ օազիսի համար ապաստանի դեր էին կատարում, ցույց են տալիս լարված ռազմաքաղաքական իրավիճակը, որով այս բնակավայրերը տարբերում էին մերձկոպետդաղյան դաշտավայրի ավանդական օազիսներից: Տնտեսական համակարգը զարգացնում էր նույն ոլորտները ինչ-որ զարգանում էին Ալթին դեպեում, միայն խոզաբուծության ավելի մեծ տեսակարար կշռով, ինչը կարող էր պայմանավորված լինել այնպիսի մեծ գետերի, ինչպիսին Մուրհաբն է ջրառատությամբ: Ընդհանուր առմամբ Քելելի օազիսի մշակույթը՝ Ալթին դեպեի շերտերի տեղական տարբերակն է աննշան տեղային նորամուծություններով: Դրա ծագումը հարկ է ուղղակիորեն կապել հարավային Թուրքմենստանի մետրոպոլիայից նստակյաց երկրագործական բնակչության տեղաշարժման հետ: Նման տեղաշարժը հազիվ թե լիներ պարզ ներթափանցում: Ամենայն հավանականությամբ այն կազմակերպված գործընթաց էր, ելնելով քաղաքական և տնտեսական պայմաններից, որոնք ստեղծվել էին Ալթին դեպեի քաղաքակրթությունում:

Մ.թ.ա. II հազարամյակի կեսին Մուրհաբի դելտան յուրացվում է դաշնակից նստակյաց երկրագործական համայնքների կողմից: Հնագույն բնակավայրերը խմբված են դելտայի վտակների երկայնքով: Դրանց կենտրոնները զբաղեցնում են ավելի քան 5 հա. տարածք, որոնցից ոչ հեռու կան անորոշ գծագրության բլուրներ: Այդպիսի բնակավայրերում կային և հատուկ արհեստագործական թաղամասեր, որտեղ կենտրոնացված էին խեցեղենի արտադրությունը և հավանաբար մետաղագործական թաղամասերը: Այդպիսին է օրինակ՝ Թաիպ I բնակավայ-

ը, որը բնորոշվում է մշակույթի հարստությամբ: Հենց այստեղ են գտնըվել 4 գլանաձև կնիքները և դաջվածքներով երկու կավանոթ (Масимов, 1981): Մուրհաբի դելտայի ամենախոշոր հուշարձանը և, հավանաբար, այդ ժամանակի մայրաքաղաքը և համաժամանակյա օազիսի կենտրոնը Գոնուր բնակատեղին էր: Այն գրավում էր 28 հա. և ունի գրեթե քառակուսի հատակագծով ամրոց: Հնագույն բնակավայրերի մեծ մասը փոքր են և այնտեղ, որպես կանոն, բացակայում է աշխույժ արհեստագործական գործունեությունը: Ենթադրաբար խոշոր կենտրոնները հարկ է դիտարկել որպես քաղաքատիպ բնակավայր, իսկ օազիսը՝ որպես հասարակական միավորի սկզբնական օղակ, որն իր զարգացմանը զուգընթաց վերածվում էր մի միավորի՝ հայտնի որպես քաղաք պետություն: Սակայն դեռ չկա տեղեկություն, որ Մուրհաբի (Հին Մարգիանա) դելտայում, քննվող ժամանակաշրջանում բնակավայրերը հասել էին սոցիալական և քաղաքական զարգացման նման մակարդակի:

Բրոնզի դարաշրջանի Մարգիանայի մշակույթը կազմավորվում էր Ալթին դեպեի ավանդույթների հիման վրա, որոնք տեղափոխվել էին այս շրջան որպես կայուն համալիր դեռ Քելելիի օազիսի մշակույթի կազմավորման շրջանում: Հետագա նորամուծությունների (բացի խեցեղենի մեջ տեղի ունեցած փոփոխությունների, որոնք հավանաբար, կրում էին էվոլյուցիոն բնույթ) թվին են պատկանում բարդ պատկերով տափակ կնիքհմայիլների, գլանաձև կնիքների և բրոնզե իրերի (ներառյալ շքեղ կացինների) տարածումը: Կնիքների վրա գերակայում են տարբեր տիպի կենդանիների պատկերներ, այդ թվում նաև ցլեր, որոնց վրա հարձակվում են օձանման վիշապներ: Բայց կա նաև կնիք, որի վրա պատկերված է ձեռքերում մեկական պարտված կենդանի բռնած հզոր հերոսը: Այս թեման իր պատկերով ակնհայտորեն սերում է միջագետքյան էպոսի ամենասիրելի հերոս՝ Գիլգամեշից:

Մուրհաբի դելտայի յուրացումը նստակյաց երկրագործական համայնքների կողմից նոր տարածքների յուրացման նախերգանք էր:

Մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին նստակյաց համայնքները իրենց մշակույթով քիչ են տարբերվում Մուրհաբի մշակույթից, ներկայացված Ամուդարյայի միջին հոսանքում, ինչպես դրա աջ ափին՝ Ուզբեկստանի և Տաջիկստանի տարածքում (Аскаров, 1973, 1977), այնպես էլ ձախ ափին՝ հյուսիսային Աֆղանստանում (Сарианиди, 1971): Նստակյաց համայնքների կողմից բնակեցված օազիսները գտնվում են փոքր

վտակների վրա, որոնց ջուրը, դատելով ամենայնից, անհրաժեշտ էր ոռոգովի երկրագործության համար: Ամուդարյայի և Սիրդարյայի բոլոր վտակների ջրի օգտագործումը բրոնզեդարյան երկրագործների ուժերից վեր էր: Մշակվող կուլտուրաները բավականին շատ էին՝ երկու տեսակ ցորեն, գարի, կորեկ, խաղող:

Ընտանի կենդանիներից՝ բացի ուղտից, որը կիրառվում էր որպես փոխադրամիջոց օգտագործվում էր միայն մի կենդանի՝ ավանակը:

Այդ ժամանակի տիպիկ բնակավայրերից է Սապալին, որտեղ բնակավայրի կենտրոնում, Մարգիանայի քառակուսի հատակագծով մեծ կացարանների և ամրոցների նման, կառուցված էր քառակուսի (82 քառ. մ.) հատակագծով ամրոց: Պատի երկայնքով գտնվում էին միջանցքները, կենտրոնում՝ բակը, իսկ եզրագծով կողք կողքի տեղադրված էին բնակելի և տնտեսական կառույցներ, որոնցից յուրաքանչյուրը դատելով մեծությունից նախատեսված էր փոքր ընտանիքի համար: Սապալին, ինչպես այս տիպի այլ բնակավայրեր, նաև աչքի էին ընկնում բարեկեցության բարձր մակարդակով:

Դրա մասին կարելի է դատել դամբարանների նյութի առատությունից: Երբեմն դամբարաններում գտնվել են մինչև երեք տասնյակ խեցեղեն անոթներ և մի տասնյակ բրոնզից և պղնձից իրեր: Բրոնզե իրերի նշանակալից մասը գտնվել է հարուստ դամբարաններում, որոնցից շատերում կանանց թաղումներ են: Դա վկայում է, որ նրանց սոցիալական դիրքը ինչպես վաղ բրոնզի շրջանում, մնում էր բավականին բարձր: Ամուդարյայի աջ ափին ավելի խոշոր բնակավայր էր Ջարկուտանը, որտեղ կենտրոնական ամրոցը գրավում է 4 հա. տարածք, իսկ ոչ հեռու գտնվում է մի մեկուսի համալիր, բարդ ներքին հատակագծով, որը հավանաբար բնակատեղի և տաճարային կենտրոն էր: Հատկանշական է, որ ամրոցների շատացմանը զուգընթաց շատանում է նաև զենքը, որի առատությունը հաստատում է ժամանակաշրջանի անհանգիստ ռազմական վիճակը: Դա է մատնանշում նաև որոշ քանակի կենոտաֆների հայտնվելը, որոնց թիվը մ.թ.ա. II հազարամյակի վերջում ավելանում է: Հաճախ կենոտաֆներում դրվում էին այնպիսի իրեր, ինչպիսիք են ռազմական կացիններ և բրոնզե նիզակներ, որոնք ցույց են տալիս, որ կենոտաֆները կառուցվել են ի հիշատակ տղամարդ-ռազմիկների, որոնք զոհվել էին բնակավայրից հեռու:

Այսպիսով, մ.թ.ա. II հազարամյակում Միջին Ասիայի հարավում տե-

ղի է ունեցել կենտրոնների տեղափոխություն, որը բարդացրել է աստիճանական էվոլյուցիայի պատկերը, ինչը նկատվում է մերձկոպետդաղյան օազիսներում մ.թ.ա. VI-III հազարամյակների ընթացքում: Քաղաքային բնակավայրերի քաղաքակրթության կազմավորման գործընթացը, որն ակնառու երևում է Ալթին դեպեի նյութերում, ընդհատվել է տվյալ կենտրոնում: Տեղի էր ունենում բնակության սահմանների ընդարձակում, որի կազմակերպման համար հավանաբար օգտագործվել էին հասարակության հիմնական ջանքերը:

Հետաքրքիր է, որ մ.թ.ա. II հազարամյակում Ամուդարյայի միջին հոսանքում, այսինքն ապագա Բակտրիայի տարածքում, մենք չենք գտնում ամրոցներով, մոնումենտալ ճարտարապետությամբ ու տաճարային համալիրներով խոշոր քաղաքային բնակավայրեր, ինչպես դա եղել է մայայի դարաշրջանում Մեզոամերիկայում տեղ գտած իրարից հեռու բնակատեղիների կայացման ժամանակ:

Նստակյաց երկրագործական համայնքների մշակութային էվոլյուցիան, որն ավարտվեց Ալթին դեպեում պրոտոքաղաքային քաղաքակրթության կազմավորմամբ հնագիտական վավերացված նյութի ուսումնասիրության գործընթացի լավ օրինակ է: Դրա հետ մեկտեղ կան ավելի խոշոր երևույթներ, որոնք տեղ էին գտել մ.թ.ա. III հազարամյակում ոչ միայն Միջին Ասիայի հարավում, այլև մի շարք հարևան շրջաններում: Մարգիանայի, Բակտրիայի, Իրանի կենտրոնական շրջանում Շահդադի, Բելուջիստանի հյուսիս արևմուտքում Մերգարի հնագիտական համալիրները բնութագրական են մի շարք մշակույթների համար, որոնք մենք առաջարկում ենք կոչել պրոտոբակտրիական: Գեղարվեստական իրերի զննումը, որոնք համատեղում են խորին, գրեթե վաղշումերական ավանդույթները և տեղական նորամուծությունները ներկայացնում է այդ միության և Բակտրիայի մշակույթը, որպես հին արևելյան աշխարհի ակնառու օջախ (Amiet, 1986):

Այստեղ վառ երևում է տարբեր մշակույթների հարաբերությունը: Դարաշրջանի կտրվածքով այս տիպի մշակույթը բնորոշ է առաջին քաղաքակրթությունների ժամանակաշրջանին, թեև դրա նախնական արտահայտմամբ: Տարածաշրջանային մակարդակի վրա այս ամբողջ բնակատեղին մտնում է Հին Արևելքի մշակութային մակրոհամակարգի մեջ, բայց ունի մի շարք յուրահատկություններ, որոնք թույլ են տալիս խոսել հատուկ պրոտոբակտրիական ենթաշրջանի մասին: Արհեստների տի-

պերի մեջ նկատելի են էական տարբերություններ Շահրի-Սոխտե և հատկապես Մերգարի IV-VII համալիրների տիպերից: Վերջիններիս մեջ գունազարդ խեցեղենը պահպանում է իր նշանակությունը, որը ցույց է տալիս նմանություն Հարապայի մշակույթի ծագման հետ: Սակայն շուտով շրջանների մշակութային սահմանների շարժունակությունը բերում է իրավիճակի որոշակի փոփոխության և Մերգար VIII, և Սիբրիի ոչ գունազարդ խեցեղենը (Jarrige, 1985) ակներևաբար պատկանում է նույն տիպին ինչ Մարգիանայի և Բակտրիայի խեցեղենը: Ենթաշրջանի մշակույթի յուրահատկություն մարմարատիպ ապառներից պատրաստված անոթները և տափակ, հակառակ երեսին կախիկով մետաղից կնիքներ են:

Մ.թ.ա. II հազարամյակում ենթաշրջանում ուժեղանում է մշակութային ինտեգրացիայի գործընթացը: Բացի խեցեղենից մշակութային ընդհանրությունը արտահայտվում է կնիքագործության, տորևտիկայի և մետաղագործության մեջ:

Կուլտուրոգենեզի բնորոշ գիծ է մշակութային սինթեզը՝ ինքնաբուխ և խթանիչ վերափոխման փոխներգործությունը: Դա բնորոշ է պրոտոբակտրիական շրջանին: Կարելի է դիտել, թե ինչպես են ընդհանուր օրինաչափությունները արտահայտվում մ.թ.ա. II հազարամյակի Մարգիանայի կնիքագործության մեջ: Այստեղ պարզորոշ արտահայտվում են երեք տարրեր, որոնք արտացոլվում են երեք տիպի կնիքների տարածման մեջ: Առաջին խումբը տափակ, միջնապատով և կախիկաձև բռնակով կնիքներն են: Ձևով և՛ երկրաչափական, և՛ կենդանակերպ (սմբակավոր կենդանիներ, թռչուններ) նախշով դրանք ուղղակիորեն շարունակում են տեղական՝ Ալթին դեպեի ավանդույթները: Հավանաբար այս խմբի տիպաբանական զարգացումը խոշոր ցանցկեն բրոնզե կնիքներն են, որոնց սյուժեները ավելի բազմազան են: Նորույթ է կնիքների երկրորդ տիպը՝ տափակ քարե կնիք-հմայիլները: Դրանց բազմաստիճան խաչի տեսքում և սյուժեներում նկատվում են տեղական ավանդույթները: Բայց, ընդհանուր առմամբ, պատկերներն ու ոճը նկատելիորեն տարբեր են: Կան սյուժեներ, որոնք կրում են Միջագետքի, Էլամի և Հարապայի ավանդույթների ազդեցությունը: Սակայն դրանք ոչ թե ուղղակի, այլ ընտրովի փոխառնչություններ էին: Վերջապես երրորդ տիպը՝ գլանաձև կնիքներն են բարդ տեսարաններով և պատկերներով: Իր ձևով այս տիպն ակներևաբար միջագետքյան-էլամական ավանդույթների արտացոլում է: Գլանաձև կնիքների վառ օրինակներ հայտնի են Շահդադից և

Շահրի-Սոխտեի շերտերից: Կնքագործության մեջ նման բազմատարր կազմ բնորոշ է նաև Բակտրիային, որտեղ նույնպես կա կնիքների երեք տիպ: Հիսար III B և C-ում կան տափակ, կախիկով կնիքներ ու գլանաձև կնիքներ: Հյուսիսային Բելուջիստանում, ինչպես վկայում է Սիբրիի համալիրը, նույնպես կան այդ երկու տիպի կնիքները: Ընդ որում Սիբրիի կնիքների ոճն ու սյուժեները շատ մոտ են Մարգիանայի կնիքների ոճին և սյուժեներին:

Բնական է մի շարք նոր պատկերներ և սյուժեներ, ինչպես նաև ոճաբանական լուծումներ չեն կարող միջագետքյան ուղղակի փոխառնչություններ համարվել: Ավելի շուտ մենք գործ ունենք սոցիոնորմատիվ համակարգի հոգևոր որակական փոփոխությունների հետ: Արդյունքում մշակութային այս ամբողջ միության մեջ կարող ենք խոսել, օրինակ գլանաձև կնիքների պատրաստման հատուկ դպրոցի մասին, որն ընդամենը օգտագործելով հիմնական միջագետքյան ձևը պահպանել էր տեղական գաղափարախոսական և գեղագիտական կանոնները:

Փոփոխության մեխանիզմը, որը տեղի էր ունենում մ.թ.ա. II հազարամյակում պրոտոբակտրիական տարածաշրջանում պատմական տեսանկյունից բավականին բարդ էր: Այստեղ մենք գործ ունենք մի շարք տեղական քաղաքակրթությունների մշակութային ինտեգրացիայի, Միջագետք-էլամական միջավայրից փոխառված որոշ էտալոնների և, հավանաբար միգրացիոն երևույթների հետ: Վերջինիս թվին կարելի է դասել հնդիրանական էթնոսի տարածումը և դրանով պայմանավորված բարդ մշակութային և էթնիկական ձուլումը:

Այս բոլորը փոխեց զուգամետ զարգացման բնույթը և ուժեղ թագավորական իշխանության կազմավորումը, ընդլայնված պետական կառավարման մարմնների զարգացումը, գրի կայուն համակարգի առաջացումը, քաղաքակրթության և դասակարգային հարաբերությունների կազմավորման ավարտը ձգվեց շատ հարյուրամյակներ:

Գրականություն

1. **Аскаров А. А.** Саппалитепа. Ташкент, 1973
2. **Аскаров А. А.** Древнеземледельческая культура эпохи бронзы юга Узбекистана. Ташкент, 1977
3. **Бердыев О. К.** Чакмаклы-депе - новый памятник времен Анау IA //История, археология и этнография Средней Азии, М., 1968

4. **Бердыев О. К.** Монджуклы-депе - многослойное поселение неолита и раннего энеолита в южном Туркменистане // Каракумские Древности. Ашхабад, 1972, Вып. 4.
5. **Джуракулов М. Д.** Археологическая деятельность А. И. Комарова в Закаспии. //Тр. Самаркандского гос. университета им. А. Навои. Нов. сер. Археология Узбекистана. Самарканд, 1964.
6. **Ермолова Н. М.** Где же одомашнили двугорбого верблюда.// Природа, 1976, N 10.
7. **Ермолова Н. М.** Животные в культуре и в жизни древнего населения Туркменистана.// Памятники Туркменистана, 1977, N 2 (24).
8. **Ермолова Н. М.** Скотоводство и охота в Центральной Азии в эпоху энеолита и бронзы (по данным палеозоологи)/ Второй советско-американский симпозиум: Тез. докл. Ташкент, 1983.
9. **Ершов С. А.** Северный холм Анау.// Тр. Института истории, археологии и этнографии АН Туркм. ССР. Ашхабад, 1956, Т. 2.
10. **Исаков А. И.** Саразм - новый раннеземледельческий памятник Средней Азии// Советская Археология, 1968, N 1.
11. **Кирчо Л. Б.** Культурная эволюция в эпоху формирования раннегородской цивилизации// Археология Средней Азии и Блжнего Востока. Ташкент, 1983.
12. **Кирчо Л. Б.** Культурная эволюция раннегородской цивилизаци: По материалам раскопок Алтын-депе, Древние цивилизации Востока. Материалы II советско-американского симпозиума. Ташкент, 1986.
13. **Коробкова Г. Ф.** Палеоэкономические разработки в археологии и эксперементально-трасологические исследования// Первобытная археология: поиски и находки. Киев, 1980.
14. **Коробкова Г. Ф.** Эксперементально-трасологический анализ и изучение экономики древних обществ.// Археология Средней Азии и Блжнего Востока. Ташкент, 1983.
15. **Коробкова Г. Ф.** Каменные и костяные орудия в бронзовом веке. Достжения советской археологии в XI пятилетке: Тез. докл. Баку, 1985.
16. **Курбансохатов К. К.** Культура раннего и развитого энеолита предгорной полосы Южной Туркмении: автореферат дис... канд. ист. наук. Л., 1983.
17. **Куфтин Б. А.** Работы ЮТАКЭ[1] в 1952 г. по изучению культуры Анау. // Изв. Изв. АН Туркм. ССР. Сер. обществ. наук. Ашхабад, 1954, N 1.

[1] ЮТАКЭ - Южно Туркменская Археологическая комплексная экспедиция.

18. **Лисицына Г. Н.** Орошаемое земледелие эпохи энеолита на юге Туркмении. М., 1965
19. **Литвинский Б. А.** Намазга - депе (по данным раскопок 1949-1950 гг.)// Советская Этнография, 1952, N 4.
20. **Масимов И. С.** Изучение памятников эпохи бронзы низовий Мургаба. Советская Археология, 1979, N 1.
21. **Масимов И. С.** Новые находки печатей эпохи бронзы с низовий Мургаба. Советская Археология, 1981, N 2.
22. **Массон М. Е.** Краткая хроника полевых работ ЮТАКЭ за 1948-1952 гг. // Тр. ЮТАКЭ, 1955. Т. 5.
23. **Массон В. М.** Расписная керамика Южной Туркмении по раскопкам Б. А. Куфтина. // Тр. ЮТАКЭ, 1956. Т. 7.
24. **Массон В. М.** Древнеземледельческая культура Маргианы, М.-Л., 1959
25. **Массон В. М.** Кара-депе у Артыка. // Тр. ЮТАКЭ, 1960 а. Т. 10
26. **Массон В. М.** Энеолит южных областей Средней Азии: памятники развитого энеолита Юго-Западной Туркмении.// Свод Археологических Источников, 1962. Вып Б 3-8
27. **Массон В. М.** Историческое место среднеазиатской цивилизации Советская Археология, 1964 а, N 1
28. **Массон В. М.** Средняя Азия и Древний Восток. М.-Л., 1964 б
29. **Массон В. М.** Протогородская цивилизация юга Средней Азии Советская Археология, 1967 N 4.
30. **Массон В. М.** Каменный век Средней Азии понятие археологической культуры. ИМКУз, 1971 б, вып. 11.
31. **Массон В. М.** Экономика и социальный строй древних обществ. Л., 1976 .
32. **Массон В. М.** Алтын-депе: Раскопки города бронзового века в Южном Туркменистане. Л., 1981 а.
33. **Массон В. М.** Энеолит Средней Азии. Энеолит СССР/ Археология СССР. М., 1988 ж.
34. **Массон В. М.** Ленинское учение о неравномерности развития и мировой исторический процесс. Методологические и философские проблемы истории. Новосибирск, 1983 а.
35. **Массон В. М.** Древние Культуры Средней Азии: динамика развития, освоение экологических ниш, культурные связи, Международная Ассоциация по изучению культур Центральной Азии. Информ. бюлл. М., 1986 б. вып. 11.
36. **Рыбаков Б. А.** Космогония и мифология земледельцев эпохи энеолита Советская Археология, 1965 NN 1, 2.

37. **Сайко Э. В.** К истории гончарного круга и развития форм керамики. Душанбе, 1971.
38. **Сайко Э. В.** Техника и технология керамического производства Средней Азии в историческом развитии. М., 1982.
39. **Сарианиди В. И.** Памятники позднего энеолита Юго-Восточной Туркмении. Свод Археологических Источников, 1965, вып. Б 3-8, ч. 4.
40. **Сарианиди В. И.** Коллективные погребения и изучение общественного строя раннеземледельческих племен. Успехи Среднеазиатской Археологии, Л., 1972, Вып. 1.
41. **Сарианиди В. И.** Печати-амулеты мургабкского стиля Советская Археология, 1976 N 1.
42. **Сарианиди В. И.** Древние земледельцы Афганистана. М., 1977.
43. **Терехова М. Н.** История металлообрабатывающего производства у древних земледельцев Южной Туркмении: Автореферат дис... канд. ист. наук. М., 1975.
44. **Трофимова Т. А.,** Гинзбург В. В. Антропологический состав населения Южной Туркмении в эпоху энеолита. Тр ЮТАКЭ. 1960, Т. 10.
45. **Хлопин И. Н.** Некоторые вопросы развития древних земледельцев. Исследования по археологии СССР Л., 1961.
46. **Хлопин И. Н.** Памятники раннего энеолита Южной Туркмении. Свод Археологических Источников 1963, Вып. Б 3-8, ч. 1.
47. **Хлопин И. Н.** Геоксюрская группа поселений эпохи энеолита. М.-Л., 1964.
48. **Хлопин И. Н.** Памятники развитого энеолита Южной Туркмении. Свод Археологических Источников 1969, Вып. Б 3-8, ч. 3.
49. **Хлопин И. Н., Хлопина Л. И.** Могильник эпохи ранней бронзы Пархай III в Туркмении. Советская Археология, 1980 N1.
50. **Чайлд Г.** Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956.
51. **Черных Е. Н.** Некоторые результаты изучения металла анауской культуры. Краткие Сообщения Института Археологии АН СССР, вып. 91, 1962
52. **Янушевич Э. В.** О находке ячменя на поселении Алтын-депе, Каракумские Древности. Ашхабад, 1977, Вып. 5.
53. **Amiet P.** L' age des échanges inter:-raniens 3500-1700 a J.C. Paris, 1986.
54. **Jarrige G. F.** Les relation entre l'Asie centrale méridionale la Baluchistan et la va'leé l'Indus a` la fin du 3 et debut de 2 millénaire, L'archéologie de la Bactrian ancienne, Paris, 1985.
55. **Lamberg-Karlovsky C. C.** Tosi M. Shahr-i-Sokhta and Tepe Yahya: Tracts on the earliest history on the Iranian Plateau. East and West. Rome, 1973 Vol. 23.

56. **Masson V. M.** The first farmers in Turkmenia, Antiquity, 1961, N 139.
57. **Pumpelly R.** Excavations in Turkestan: Prehistory civilizations of Anau. Washington, 1908, vol. 1-2.

ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ

Լիլիթ Աբաջյան

Բանալի բառեր *- Միջին Ասիա, Անաու, Ջեյթուն, Նամազգա դեպե, Մուրհաբ, էնեոլիթ, գեոկսյուրյան օազիս, Մեանա-Չաաչա, Սիբրի, վաղ բրոնզ, Մարգիանա*

Միջին Ասիայի վաղերկրագործական մշակույթները (Անաու, Նամազգա դեպե, Սարազմ, Մեանա- Չաաչա, Մոնջուկլի, Յալանգաչ դեպե, Ջեյթուն) հիմնականում զարգանում էին տարածաշրջանի հարավ-արևելքում, որը պայմանավորված էր բարենպաստ օազիսային երկրագործությամբ և Առաջավոր Ասիայի ու Իրանի հետ ունեցած կապերով: Գտնված նյութը ցույց է տալիս, որ Հարավային Թուրքմենիստանը հնագույն մշակույթի, առանձին կենտրոն էր:

Ջեյթունյան նեոլիթը տիպիկ արտահայտումներ էր այն տեղական գործընթացների, որոնք Մերձավոր Արևելքի բոլոր շրջաններում հետագա զարգացման հիմքն էին վաղերկրագործական մշակույթներից մինչև առաջին քաղաքակրթություններ:

Մ.թ.ա. II հազարամյակում, պրոտոբակտրիական շրջանում հինդո-իրանական էթնոսի տարածման պատճառով տեղի էր ունենում բարդ ինտեգրացիոն գործընթաց: Դա թուլացրեց ուժեղ կենտրոնական իշխանության կազմավորումը, պետական ղեկավարման զարգացման գործընթացը, գիր համակարգի կայուն ստեղծումն ու դասակարգային հասարակության առաջացումը, հետաձգելով այդ գործընթացների ավարտը հարյուրավոր տարիներ:

ДРЕВНИЕ КУЛЬТУРЫ СРЕДНЕЙ АЗИИ

Лилит Абаджян

Ключевые слова *- Средняя Азия, Анау, Джейтун, Намазга депе, Мургаб, неолит, геоксюрский оазис, Меана-Чаача, Сибри, ранняя бронза, Маргиана*

Раннеземледельческие культуры Средней Азии (Анау, Намазга тепе, Алтын депе, Саразм, Меана-Чаача, Монджукли, Ялангач тепе, Джейтун) в основном развивались на юго-востоке региона, что обуславливалось благоприятным оазисным земледелием и связями с Передней Азией и Ираном. Найденный

здесь материал показывает , что Южный Туркменистан был самостоятельным центром древней культуры. Джейтунский неолит- типичное проявление тех локальных процессов, которые во всех регионах Ближнего Востока были основой для дальнейшего развития от раннеземледельческих культур до первых цивилизаций.

Во II тыс. до. н. э. в протобактрийском периоде происходят сложные интеграционные процессы из-за распространения индо- иранского этноса. Все это ослабило образование сильной царской власти, государственного правления, образования стабильной системы письма и форморования классового общества и задержало окончание этих процессов на долгие столетия.

THE ANCIENT CULTURES OF MIDDLE ASIA

Lilit Abajyan

Key words: *Middle Asa, Anau, Jeytun, Namazga depe, Murhab, neolith, Gheoksyur oasis, Meana-Chaacha, Sibri, Early Bronze, Marghiana.*

The early agricultural culturies of Middle Asia (Anau, Namazga depe, Altin depe, Sarasm, Meana Chaacha, Monjukly depe, Yalangach depe, Jeytun) mostly developed in the south- east of the region which was stipulated by the favourable conditions of the oasis agriculture and ties with the Near East and Iran. The material which was found here shows that the southern Turkmenistan was an independent center of the ancient culture. Jeytun neolith is a typical reflection of those local processes which in all regions of the Near East were the basis for the future development from early agricuitural cultures to first civilizations.

In the II millennium B.C. in the protobactrean period complicated intergretion processes began because of the spread of the indo-iranian ethnos.

All these weakened the formation of the strong power of the king and govermental rule, the formation of the steady system of writing as well as class society and delayed the end of these processes for many centuries.